

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

34-րդ ՏԱՐԻ

1885 ԴԵԿՏԵՄԲԵՐ 21

ԹԻՒ 3801

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 21 ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿԵԱՆՑ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Ի ստորեւ կը հրատարակենք Դպրոցասէր Տիկնանց ընկերութեան երկամեայ հաշուեցոյցն զոր ստացանք այս շաբաթ եւ որ մեզ ճիշդ տեղեկութիւններ կը հաղորդէ այդ ընկերութեան վիճակին վրայ .

ԵՐԿԱՄԵԱՅ ՀԱՇՈՒՆՑՈՒՑԱԿ

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿԵԱՆՑ ԸՆԿ .

1883 ՕԳՈՍՏՈՍ 1 — 1885 ՅՈՒՆԻՍ 31

Մ Ո Ւ Տ Ք

Դրամագլուխ

Ըստ 1883 յունիս 31ի փակեալ հաշուոց դրամ առ Մեծ. Հաճեան եղբարց դրամատունն .

Դահ. Արծաթ 41948.—

Սոյն թուականին երաշխաւորեալ փոխատուութիւն . 21,600.—

Սոյն թուականին սպաննջը այլեւայլ (յամաբաժնից) . 733.—

Բաժնէքէն և Բացադատութիւն

Ընկերուհեաց ամսականներէ . 1842.—

» բացակայութենէ . 38.—

Հանգանակութիւն

1883ի հանգանակութենէ ի զանազանից . 6045.—

Նութք

Օսմանեան Պանքայէ նուէր . 2140.—

Տիկ. Եսայեանի և Տիկ. Յակոբեանի նուէր վասն զգեստուց չորս գիշերօթիկի . 518.—

Զանազաններէ նուէր . 1078.—

Այլ և այլ հասոյթ

1883-84ի վիճակահանութեան նէ գոյացած . 12,120.—

Վիճակահանութեան առթիւ ստակի շահ . 48.75

Թատերական ներկայացում . 1065.—

Կարասիք

Կարասեաց գին . 5948.—

Տոկոս

Երաշխաւորեալ փոխատուութենէ գանձուած տոկոս 12 1/2% շահով 9 3/16 յունիս . 5500.—

Մեծ. Տեարց Խ. Ա. Հաճեան և Ընկ. քով եղած դրամին տոկոսը 6 1/2% շահով 1885 Յնվր. 1-84 դեկտեմբեր 31ի Լ. Օ. 46.11.75 4988.75

Համագումար . 101,610.50

Ե Լ Ք

Թողալ

Ուսուցչաց ամսական . 21604.—

Գործակատարաց ամսական . 7064.—

Գիշերօթիկ

Վեց գիշերօթի ուտեստի . 12092.75

» » դեղագրի , 1542.75

Կօշիկի , զգեստի .

Տղաքրահան

Քննութեան, մրցանակաբաշ .

խոսթեան, հրաւիրագրերու ար- պագրութեան .	540.—
Ա. յլույլ Ժախ+	
Տան վարձք .	7128.—
Կարասեաց ծախք 1879 էն ի վեր .	4357.—
Դասագիրք .	910.50
Ձեռագործի ծախք .	344.—
Կաղանդի անթիւ նուէրք .	305.—
Նամակի թուղթ, պահարան, բօսթա, երթեւեկութիւն .	542.75
Գարնայական թուղթ, գրիչ, թանաք .	753.75
Ա. յլույլ Ժախք դպրոցական (վառարան եւ) .	911.50
Բաժանորդագրութիւն լրա- գրաց (Սրեւելք, Թէրճէման, Լոյս) .	1081.50
Ածուխ և փայտ .	2820.25
Վարժարանին տարեգարծի առթիւ ծախք .	205.25
Վիճակահանութիւն և ար- տաքոյ կարգի ծախք .	1230.50
Ա. յլույլ Կահանք+	
Յամաքաժնից .	1002.—
Փոխարան-նիւն	
Երախաւորեալ փոխատուու- թենէ մնացորդ գրամ .	1080.—
Դրամ	
Մեծ. Տեարց Խ. Ա. Հաճեան եւ Ընկ. բով Լ. Օ. 286.42.25	
վեց 0/0 տոկոսով .	50952.75
Սնտուկը գտնուած գրամ .	5581.25
Համագումար .	101.610.50

Ի դիմաց Դպրոց. Տիկ. Ընկերութեան
Համարակալ Գանձապետ
ՍԱԹԻՆԻԿ Ֆ. ՄԱԼԷՋԵԱՆ Բ. Գ. ՆԻՄՅԷ

Ինչպէս որ աստ իլը տեսնուի, 1885 օ-
գոստ. 1 է ցՅ1 յուլիս 1885 երկամեայ չըր-
ջանի մը հաստութից եւ ծախուց, պահանջից
եւ պարտուց մի անխորհուրմն է որ մեր ա-
չաց առջեւ իլը ներկայանայ եւ ամեն ըն-
թերցող իրաւունք ունի իւր արժան դա-
տած եղանակաւ քննել, դատել, կշռել եւ
վճարել, արուած թուերու գորութիւնն ի նը-
կատ առնելով:

Մեր եւս մեր այդ իրաւունքն ի դործ
պիտի դնենք:

Նախ, ըսենք թէ դործը չէ դժուարին .
ինչու որ համարակալութեան տեսակէտով
ըստ բաւականին հաշիւն ամփոփ է եւ մի-
պնդամայն մանրամասնութիւնը չեն պակ-
սիր: Հաշուակալը ստէպ իրենց տոմարա-
կալութեան բարձր կարողութիւններն ցոյց
տալու նպատակաւ ամբողջին հաստատու-
թեանց հաշուոց մէջ այնպիսի ձեւեր կը գոր-
ծածեն որպէս թէ դրամատան մը եւ կամ
վաճառատան մը դործողութիւններն պատ-
կերացնել ուզեն: Երբ հաշիւ մը ժողովըր-
դեան պիտի ներկայանայ՝ պէտք է պարզ
ըլլայ եւ դիւրահասկանալի. եւ ազգասիրա-
կան նպատակաւ հաստատեալ ընկերու-
թեանց հաշիւներն, ուր պէտք է ցոյց տըր-
ուին հասոյթներն եւ ծախքերն, խառնի-
ճաղանճ ու դժուարիմաց ըլլալով միշտ կը
կորսնցնեն: Բայց այս նիւթին վրայ ուրիշ
առթիւ մանրամասնորէն կը խօսինք եւ այ-
ժմ դառնանք մեր Տիկնաց, որոց հաշ-
ուեցոյցն պարզութեան հանգամանքներն
ունի:

Երկու տարւոյ միջոցին ի՞նչ հասոյթներ
ունեցած է այդ ընկերութիւն .

Ընկերուհեաց ամս. եւ բացակ .	Դ. Ս. Արծթ. 1880. —
1883 ի հանգանակութիւն	6043. —
Օսմանեան Պանքայէ նուէր	2140. —
Տիկ. Ենայեանէ եւ Յակոբեանէ	548. —
Ջանադաններէ նուէրք	1078. —
1883 — 84 ի վիճակահանութիւն	12168. 75
Թատերական ներկայացում	1065. —
Փոխատուութենէ տոկոս	3500. —
Տ. Տ. Խ. Ա. Հաճեան եւ Ընկ. Ե տոկոս	4988. 75
Գումար	33381. 50

Եւ ի՞նչ է եղած ծախքը .

Ուսուցչաց ամսական	Դ. Ս. Արծթ. 21604. —
Գործակատարաց (հաւաքչաց)	7064. —
Վեց գեշերթիկներու ուստեստի	12092. 75
» » Գեղանգիր եւ զգեստ	1342. 25
Տպագրութիւնք	540. —
Տան վարձք	7128. —
Կարասեաց 1879 էն ի վեր	4357. —
Բաժանորդագրութիւն լրագրաց	1081. 50
Ածուխ եւ փայտ	2820. 25
Այլ եւ այլք	4984. 25
Գումար	63014. —

Չէ կարելի անտարբեր աչօք դիտել այն

ահագին տարբերութիւնն որ հասոյթից եւ ծախուց միջեւ գոյացած է : 65,014էն բառնալով 55,581.50ն, կը մնայ 29,632.50 դահեկան զոր ընկերութիւնը Դրամագլխէն (*) վատնած է :

Սրդարեւ 1883 Յուլիս 51 ին ընկերութիւնն ունէր 65548 դահեկան պատրաստ, որոյ շուրջ 42000ն Մեծ. Հաճեան եղբարց քով եւ 200 ոսկին երաշխաւորեալ փոխատուութիւն : 1885 Յուլիս 51 ին պատրաստ դրամն իջած է 57,594 ի որոյ 286 ոսկին նոյն դրամատան քով է եւ 5581.25ը դանձապէս Տիկնոջ քով : Ընկերութեան պատրաստ դրամէն 26000 դահեկան նուազած է եւ այս ընթացքով եթէ երեք տարի եւս չարունակէ, ոչ մի փարա պիտի մնայ յարկեղ :

Վտանգն ալ աւելի մօտալուտ է ինչու որ 55581.50 զրոյ հասոյթից մանրամասնութիւնն ընկերով կը տեսնենք թէ սորա 8488.75ը պատրաստ դրամին տոկոսն է եւ եթէ պատրաստ դրամն հատնի, ուստի դայ տոկոս :

Նմանապէս այդ գումարին մէջ կայ դհ. 12168, ըսել է Վէն աւելին վիճակահանութեամբ այսինքն արտաքոյ կարգի ձգտիք գոյացած, թող 1885ի հանգանակութիւնն որ 6045 դահեկանովն ամեն տարի չգար հաշուեկշիւին մէջ բազմելու :

Ապա ուրեմն Գլորոցատէր Տիկնանց ընկերութիւնն դրամական վիճակովն այնքան չփայլի որքան բարոյապէս, եւ թուանշանները կուգան պատմել թէ նա հնչուն քաջաբերութեան կը կարօտի :

Եւ ինչպէ՞ս գոյացած է երկամեայ 65014 դահ. ծախքը :

Երեւակայեցէք անգամ մը որ վարժարանին դասատուաց ամսականքն 21,604 դհ. որ ըսել է տարին 10800 եւ կամ ամիսը 900 դահեկան արժած են միջին հաշուով : Ինչ մեծ խնայողութեւն : Ամեն անոնք որ տարեկան հարցաքննութեանց ներկայ գտնուե-

ցան չպիտի հաւատան իրենց աչքերուն այս 900 թիւը տեսնելով : Այո՛, տեսարք, եւ ոչ իսկ 9 ոսկի կը ծախսեն Գլոր. Տիկնայք իրենց վարժարանին դասատուաց համար :

Ասկայն ո՛ւր կ'երթայ ծախուց մնացորդ 42000ը :

6 գիւերթիկներու սւտեստի եւ հագուստի, 15400 : Շիտակն ըսելով ապագային համար չէ թէ միայն ուսեալ այլ նաեւ յոյժ սակաւագէտ վարժուհիներ կը պատրաստուին անդ, քանի որ դրեթէ ոչինչով կը սնանին, ոչինչով կը հագուին :

Ապա ծախուց մէջ նշմարելի են 7128 դահ. տան վարձքն որ անխուսափելի է. 4587 դահ. կարասեաց ծախքն որ թուի թէ ընկերութեան հաստատութենէն ի վեր ծախուց չէր անցած, 2820 դահ. փայտի եւ ածուխի : Վերջապէս միով բանիւ ակներեւ է թէ Գործադիր Ժողովն մխող ըլլալէ հետեւ է :

Ինչ եզրակացութիւն կրնանք հանել այս ըննութենէն :

Գլորոցատէր Տիկնանց ընկերութիւնն 1879 մայիս 1 էն ի վեր փայ : Ըսել է յառաջիկայ մայիսին եթէ տարեկան պիտի ըլլայ : Ընկերութիւնը անցեալ նման երկու աշակերտուհիներ ընծայեց որք թէպէտ ոչ ուսումնաւարտ սակայն բաւական յառաջացած՝ դաւառներ ուղեւորեցան վարժուհւոյ պաշտօն վարելու : Ասկէ վերջ ամեն տարի պիտի կարենայ նոյնքան արտագրել եթէ ոչ աւելի : Ապա ուրեմն տեսնելով թէ ընկերութեան վիճակը վտանգալից է, տեսնելով թէ հաստատուն վիճակ մը ստանալու ժամանակն հասած է, տեսնելով թէ ընկերութեան գործող անդ ամոց մէջ յոյժ կարող տիկնայք եւ օրիորդք կը գտնուին եւ այժմ վերստին իրենց գլուխէն Տիկին Սրբուհի Տրեսար, տեսնելով վերջապէս թէ անուոյ խնդիր մ'է ընկերութեան շարունակութիւնը՝ պէտք է որ բոլոր անդամք ոյժերին միացնեն, ամեն ջանք ի դորձ դնեն հասոյթներն կրկնապատկելու եւ եթէ կարելի է ծախքերը նուազեցնելու :

Իսկ ազգին վրայ եւս պարտականութիւն մը կայ, այն է քաջաբերել Աշխուհի Տիկիններն նիւթական եւ բարոյական օգնութիւնն չզրանալով, երբ իրեն կը դիմեն :

(*) Հիմնովին սխալ է այս «դրամագլուխ» բառը որ Աղդ. Հաստատութեանց համար ստեպ կը գործածուի : Գլորոցատէր Տիկնանց ընկերութիւնն ինչպէս Հայուհեացն եւ ինչպէս Միացեալ ընկերութիւնը ընտելուին դրամագլուխ : Այլ «պատրաստ դրամ» է եւ կամ նախորդ շրջաններէ հասոյթից յաւելեալ դրամ զոր կը գործածեն ի հարկին :

Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ՂԱԼԱԹԻՈՅ

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Զ Ի Ն

ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆՆ ԿԱՐԺԱՐԱՆԻ

Յօդ. 1. — Ազգային Կեդր. Վարչութեան խառն Ժողովոյ որոշմամբ Ղալաթիոյ Կեդր. Վարժարանի մատակարարութիւնն յանձնուած է տասն պատուարժան անձերէ կազմուած Խնամակալութեան մը, որոյ անդամք կարգուած են Աբիկ Ունճեան, Անտոն Հաճեան, Կարապետ Սըվաճեան, Մկրտիչ Էսաեան, Մինաս Չերազ, Յարութիւն Նորատուկեան, Յովհաննէս Թորոսեան, Յովսէփ Եոսուֆեան, Սերովբէ Կիւլպէնկեան եւ Տիգրան Բարաղամեան էֆէնտիք:

Յօդ. 2. — Խնամակալութեան պաշտօնավարութիւնն հինգ տարուան համար սահմանեալ է, սկսեալ յառաջիկայ 1886 տարւոյ Յունուարի 1էն:

Յօդ. 3. — Խնամակալութեան պաշտօնըն է:

Ա. Բանալ Ղալաթիոյ Կեդր. Վարժարանը սոյն Կանոնադրով տրամադրեալ կըրթական յայտադրին համաձայն, եւ պահել զայն պարտուպատշաճ վիճակի մէջ:

Բ. Մատակարարել Ղալաթիոյ կալուածներն, եւ յատկացնել կալուածոց եւ վազըֆի հասոյթները Կեդր. Վարժարանի ծախուց, եւ վարել վազըֆի գործողութիւններն ազգային սեփականութեանց համար արդէն ընկալեալ եւ յապաղային Վարչութեան կողմէ հաստատուելիք օրինաց համաձայն:

Գ. Վճարել կալուածոց նորոգութեանց և սպահովագրութեանց ծախսերը, կալուածական եւ այլ օրինական տուրքերն, ինչպէս նաեւ Ղալաթիոյ համար Ազգ. Վարչութեան կողմէ որոշուած բանաւէրի տրոց կէտը, միւս կէտին վճարումը թաղին եկեղեցւոյ սնտուկին պատկանելով:

Յօդ. 4. — Կեդր. Վարժարանի խնամակալութիւնն արտօնեալ է դրամական կառողութեան տէր աշակերտաց համար պատ-

շաճ քանակութեամբ թոշակ մը սահմանել, իսկ ձրիաբար պիտի ընդունուին ի վարժարան աղքատ ուսանողք՝ վկայեալք յԱզգ. Պատրիարքարանէ:

Յօդ. 5. — Կալուածական հասոյթներէ եւ Կեդր. Վարժարանի ուսանողաց թոշակներէ, ինչպէս նաեւ նուիրատուութենէ եւ կտակներէ գոյանալիք գումարներէն զատ Խնամակալութիւնն արտօնեալ է նաեւ արտասովոր հասոյթներ հայթայթելու, ինչպէս են՝ հանգանակութիւն, վիճակահանութիւն, եւ, եւ այս մասին Ազգ. Պատրիարքարանի հաւանութիւնն առնելով, պիտի վայելէ նորա բարոյական աջակցութիւնը:

Յօդ. 6. — Արգիլեալ է Խնամակալութեան կալուածներն գրաւի դնել, թէեւ պայմաններն չահուէտ իսկ լինին:

Յօդ. 7. — Վազըֆի մահլիւններէ արտադրեալ գումարք պիտի յատկանան Ազգ. Կեդր. Վարչութեան հաւանութեամբ ծախու առնուելիք նոր կալուածոց գնման, կամ նորոգ կառուցանելի կալուածական շինութեանց, եւ բոլոր ասոնց հասոյթներն եւս պիտի յատկանան Կեդրոնական վարժարանի մատակարարութեան: Բայց սակայն առաջին անգամ ուսումնարանի բացման առթիւ պէտք եղած սկզբնական ծախուց համար, ինչպէս են՝ նորոգութիւնք վարժարանի, գնումն կարասեաց, գրեանց, ուսումնական գործիքներու եւ, Խնամակալութիւնն արտօնուած է առ առաւելն 500 ոսկւոյ գումար մ'առ այս յատկացնել արդի գոյացեալ մահլիւլի հասոյթէն:

Յօդ. 8. — Խնամակալութիւնն պիտի վայելէ թաղային պաշտօնէութեանց ըստ Սահմանադրութեան ունեցած իրաւասութիւններն եւ պարտականութիւններն, եւ ըստ այնմ պատասխանատու է Ազգային վարչութեան թէ՛ կալուածոց եւ վազըֆի մատակարարութեան եւ թէ՛ վարժարանին տնտեսական եւ ուսումնական մասին, որոց հաշիւներն ու համարատուութիւնը կանոնաւորապէս ամեն տարեգլուխ պիտի ներկայացնէ Ազգ. Կեդրոնական Վարչութեան ի ըննութիւն եւ ի վաւերացումն:

Յօդ. 9. — Եթէ Խնամակալութեան անդամներէն հրաժարմամբ եւ կամ մահուամբ պակասողներ լինին՝ մնացեալ անդամք մին-

չեւ երկու ամիս ընտրելեաց երկպառակ
ցանկ մը պիտի ներկայացնեն Ազգային Վար-
չութեան ընտրութեան եւ վաւերացման
համար : Եթէ անպիտի զանուիրն սոյն պար-
տականութիւնը մինչեւ երկու ամիս կա-
տարելու՝ Վարչութիւնն կանխաւ ազգա-
րարութիւն մ'ընելէ յետոյ, ինքն կը կատա-
րէ այդ ընտրութիւնն եւ կը հաղորդէ Խը-
նամակալութեան :

Յօդ. 10.— Խնամակալութիւնը ջանադիր
պիտի լինի յառաջիկայ տարւոյն սկիզբները
բանալ Կեդրոնական վարժարանը :

Յօդ. 11.— Ըստ որում հոգեւոյս Տ. Ներ-
սէս Ս. Պատրիարքի նախաձեռնութեամբ
սկսեալ հանգանակութեան արդեամբը պի-
տի վճարուի Ղալաթիոյ կալուածոց անտուկի
մնացորդ պարտքն ի ձեռն Ներսէս Վար-
ժապետեան ընկերութեան, Ազգ. Կեդր.
Վարչութիւնն որոշած է որ վարժարանին
մէջ պատշաճ դիրքով եւ եղանակաւ արձա-
նագրուի այս ազգօգուտ նուիրատուու-
թիւնն ի յիշատակ հոգեւոյս Տէր Ներսէս
Սրբազան Պատրիարքի, հանդերձ անուամբ
նուիրատուաց :

Յօդ. 12.— Խնամակալութիւնը պարտա-
կան է իւր պաշտօնավարութիւնն աւարտած
պահուն յանձնել առ Կեդր. Վարչութիւն
զվարժարանն իւր ամբողջ գոյքերով, (ինչ-
պէս են՝ կալուածագիրք, միւս գրեանք,
ուսումնական գործիք, փահ կարասիք, պատ-
րաստ դրամ, հաշուական եւ արձանագրա-
կան եւ այլ պաշտօնական ամեն գրու-
թիւնք) եւ բնաւ ո՛ր եւ է պարտք չթո-
ղուլ :

Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Կ Ր Թ Ա Վ Ա Ն Յ Ա Յ Տ Ա Գ Ի Ր

Յօդ. 13.— Կեդրոնական վարժարանի
ուսմանը ընթացքն հինգ տարւոյ տեւողու-
թիւն պիտի ունենայ, եւ երկու շրջաններու
բաժնուած է : Առաջին շրջանի համար ե-
րեք, իսկ երկրորդ շրջանի համար երկու
տարի սահմանեալ են :

Յօդ. 14.— Աշակերտ մը Կեդրոնական
վարժարանի Ա. շրջանին մէջ ընդունուելու
համար պէտք է գիտնայ .

Կրօն. — Փրիստոնէական եւ Սրբազան
պատմութիւն :

Հայերէն. — Քերականութիւն, գրաբան
յաշխարհաբան թարգմանութիւն, պարզ
խմբագրութիւնք :

Օսմաներէն. — Ընթերցումն եւ ուղղա-
գրութիւն :

Ֆրանսերէն. — Համառօտ քերականութիւն
եւ թարգմանութիւն Փրանսերէնէ ի հայ :

Պարսեւերէն. — Ազգային, եւ ծանօթու-
թիւնք ի վերայ հին ազգաց :

Աշխարհագրութիւն. — Տարերք բնական եւ
բաղաբական աշխարհագրութեան :

Ռուսերէն. — Թուաբանութիւն ամբողջ
եւ սկզբունք երկրաչափութեան :

Գեղաբանութիւն. — Հայերէն, տաճկերէն,
գաղղիերէն :

Գնաբանութիւն :

Յօդ. 15.— Կեդրոնական վարժարանի Ա.
եռամեայ շրջանին մէջ պիտի աւանդուին .

Կրօնագիտութիւն :

Հայերէն. — Ընդարձակ քերականութիւն,
գրադիտութիւն, շարագրութիւն աշխար-
հաբան եւ գրաբան, վերծանութիւն հին
եւ նոր հեղինակաց :

Օսմաներէն. — Արաբերէն եւ պարսկերէն
քերականութիւն, օսմաներէն շարագրու-
թիւն, թարգմանութիւն Փրանսերէնէ օս-
մաներէն եւ իոնադարձ :

Ֆրանսերէն. — Քերականութիւն ամբողջ,
թարգմանութիւն հայերէնէ ի Փրանսերէն
եւ իոնադարձ, տարերք մատենագրու-
թեան, միջակ խմբագրութիւնք :

Պարսեւերէն. — Ազգային եւ Օսմանեան
պատմութիւն, համառօտ պատմութիւն հին
եւ նոր ազգաց :

Աշխարհագրութիւն. — Փաղաքական եւ
պատմական եւ մասնաւորապէս Թուրքիոյ :

Ռուսերէն. — Թուաբանութիւն տե-
սական եւ գործնական եւ վաճառականա-
կան, գրահաշիւ ցվերջ Բ. աստիճանի, երկ-
րաչափութիւն տարրական, երկրաչափական
խնդրոց գրահաշուով լուծումը, եռանկիւ-
նաչափութիւն, անդաշափութիւն :

Բնական գիտութիւնք. — Բնագիտութիւն,
բնական պատմութիւն եւ տարրալուծու-
թիւն արհեստական :

Իրաւագիտութիւն. — Տարերք իրաւագի-
տութեան եւ Օսմանեան օրէնսդրութեան :

Վաճառականութիւն. — Տոմարակալութիւն, վաճառականական աշխարհագրութիւն եւ օրէնք :

Առողջաբանութիւն : Սղաբութիւն : Գծաբութիւն :

Յօդ. 16. — Կեդրոնական վարժարանի Բ. երկամեայ չրջանին մէջ պիտի աւանդուին :

Կրօնագիտութիւն :

Հայերէն. — Քննական քերականութիւն, մատենագրական լուծումն գլխաւոր հայ հեղինակաց, ստուգաբանութիւն եւ բաղդատական բանասիրութիւն :

Օսմանէի. — Դպրութիւն եւ խմբագրութիւնք :

Ֆրանսերէն. — Քննական ընթերցումն մատենագրաց եւ խմբագրութիւնք :

Պարսկ. — Ընդհանուր ազգաց, իմաստասիրութիւն պատմութեան :

Աշխարհագրութիւն. — Ընդհանուր ազգագրութիւն (վերջին ուղեւորութիւնք) :

Ռուս. — Գրահաշիւ, երկրաչափութիւն, վերլուծական երկրաչափութիւն, գործնական տեղագրութիւնք : Նշանկանաչափութիւն, մակարդակ եւ զնդածեւ : — Մեքենագիտութիւն. — Տիեզերագրութիւն :

Բնական գիտութիւն. — Բնապատմութիւն (կենդանաբանութիւն, բուսաբանութիւն, երկրաբանութիւն, հանքաբանութիւն), պարրալուծութիւն (անգործարանաւոր եւ գործարանաւոր), բնագիտութիւն, հանդերձ ուսողութեան գործածութեամբ :

Իմաստասիրութիւն. — Հոգեբանութիւն, տրամաբանութիւն, բարոյագիտութիւն եւ պատմութիւն իմաստասիրութեան :

Բաղադրական գիտութիւն :

Իրաւագիտութիւն. — Օսմանեան եւ ազգային, օրէնսգրութիւն եւ վարչական իրաւագիտութիւն :

Եւրոպական գիտութիւն :

Մանկավարժութիւն :

Յօդ. 17. — Վարժարանին եռամեայ եւ երկամեայ կրկին չրջաններու իւրաքանչիւր փարւոյ կրօնագիտութեան ուսման բաժանումները կը սահմանէ Կեդրոնական վարչութեան Կրօնական Ժողովն, ինչպէս նաեւ այս ուսմանց դասատուները կ'ընտրէ եւ կը հսկէ աւանդութեան եղանակին վրայ :

Յօդ. 18. — Կեդրոնական վարժարանի մէջ բարձր գիտութիւնք պիտի աւանդուին եւրոպական յարմար դատուած լեզուաւ մը :

Ընկալեալ եւ վաւերացեալ ի Խառն Ժողովոյ Ազգային Կեդրոնական վարչութեան ի նիստ 20 նոյեմբերի 1885 ամի :

(Ստորագրութիւն)

Պ. Կ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍՐԲԵՊԻՍԻՈՊՈՍ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

ԱՆԳԼԻՍԱԿԱՆ ՀՆԴԿԱՍՏԱՆ

Դ.

ԲԱՆԱԿԲ ԵՒ ԲՆԻԿ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Հնդկաստանի անգլիական բանակը կը կը բաղկանայ երկու մասերէ, մին եւրոպական եւ միւսը բնիկ : Աւասիկ 1884-1885 տարիներու եւրոպական բանակին վիճակագիրը. թնդանօթածիդ զօրք 11,262, այրուծի 4,284, ամրաշէնք 439, հետեւակը 45,506, — գումար 61,491 : Իսկ բնիկ բանակը կը բաղկանայ հետեւեալ կերպով. թնդանօթածիդ 1861, զնդապահը 202, այրուծի 18,375, տապարաւորք 3251, հետեւակը 105716, — գումար 127,405 : Այս թուոյն մէկ քառօրդը կը կազմեն մահմետական զօրանքը :

Սոյն երկու բանակաց ծախքը կը հոգայ երկիրը, սակայն պէտք է գիտնալ թէ, տօնիկանութիւնն այդ թուոյն մէջ չէ, որ կը բաղկանայ 147000 անձերէ, բիշ շատ լաւ զինեալ եւ կրթեալ. Հարկաւ այդքան բազմամարդ. երկրի մը համար այս բանակը մեծ զօրութիւն մը չէ, բայց թէ՛ քաղաքական եւ թէ՛ դրախական պատճառներով 1857ի մեծ ապստամբութենէն ի վեր Անգլիացիք զգուշացած են անոր թիւն աւելցնելէ, որ այն ժամանակէն առաջ հիմնականին կրկնապատիկն էր : Այս բանակը խաղաղութեան ժամանակի համար է եւ Անգլիացիք կ'ըսեն թէ շատ զիւրին է բարձրացնել անոր թիւն ի պահանջել հար-

կին : Բայց պէտք է նկատել թէ գոնէ ներքուստ խաղաղութիւնն ապահովեալ է միանգամ ընդ միշտ , վասն զի Անգլիացիք բնիկ ժողովրդեան մէջ արհեստագործութեան եւ երկրագործութեան սէրը տարածած լինելով , այն մարդիկն որ առաջ գինուորական ասպարէզին մէջ կը նկատէին լոկ միջոց մը յառաջագիմութեան եւ հարստութեան հիմա մարդկութեան օգտակար աշխատութեանց մէջ կը փնտռեն այդ բարիքը , հետեւաբար այլ եւս մարած է երկրին մէջ նախկին պատերազմական եռանդն եւ աստի յառաջ եկող ապստամբութիւնը . ու ցեղական կռիւք , եւ իշխան իշխանի դէմ գողապարք մերթ զտած են :

Այսու ամենայնիւ հնդկական բանակին կարողութեանը եւ հաւատարմութեանը վրայ տակաւին որոշ գաղափար մը չենք կրցած ունենալ , վասն զի դեռ չենք տեսած ի հանդէս եւրոպական բանակի մը դէմ :

Մեր անգլիական Հնդկաստանէն դուրս կան բուն հնդիկ կառավարութիւններ հարկատու կամ դաշնակից Անգլիոյ . ասոնց երկիրները խմբովին ունին 500,000 քառակուսի անգլ. մղոն , 169,905 քաղաք . եւ դիւղ , եւ 55,156,000 բնակիչ , զոր գումարելով Անգլիական Հնդկաստանի բնակչաց հետ կ'ունենանք 253,906,000 : Այս կառավարութիւններն իրարմէ մեծապէս կը զանազանին տարածութեամբ . եւ կարեւորութեամբ . օրինակի համար , Հայտէրասլատ Խալիլի չափ կայ եւ իւր վեհապետն՝ անուանեալ Նիլամ 1,650,000 անգլ. լիրա եւ կամուտ ունի . բայց ամոր հակառակ կան նաեւ փոքր իշխաններ գիւղի մը կամ աւանի մը պէտ . այս մեծ ու փոքր կառավարութեանց թիւը կ'ենէ մինչեւ 800 , որոնցմէ 200ը միայն կարեւոր կը համարուին :

Այս պետութեանց յարաբերութիւնքն ընդ անգլ. կառավարութեան կը զանազանին ըստ իւրեանց կարեւորութեան , բայց ընդհանրապէս հետեւեալներն են :

Ա. Հնդկաստանի բնիկ իշխաններն ոչ կրնան միմեանց դէմ պատերազմ հրատարակել , ոչ միմեանց քով դեսպան ունենալ եւ ոչ օտար պետութեանց քով . Անգլիական կը ներկայացնէ զանոնք քաղաքականա-

պէս եւ կ'երաշխաւորէ իւրեանց խաղաղութիւնը . նա եւս հաշտարար է այն պահէ մէջ՝ երբ որ կրնան ծագիլ իրերաց մէջ :

Բ. Անգլիական կառավարութիւնը կը հսկէ բնիկ պետութեանց վրայ ի ձեռն պաշտօնէի մը որ կը կոչուի Տեղակալ կամ Գործակատար . սա կը բնակի ամեն կարեւորութիւն ունեցող պետութեան մայրաքաղաքն կամ այն կեդրոնն որուն շուրջը խմբեալ կան երկրորդական իշխանութիւններ :

Գ. Բնիկ իշխաններէն շատերն յանձնառու եղած են որոշեալ թուէ մը անդին չբարձրացնել իրենց բանակին գումարը . իսկ անոնք որ գրաւոր դաշնագրութիւն մը չունին այս մասին , եթէ քիչ մը ճոխացնեն իրենց բանակն , անմիջապէս անգլ. կառավարութիւնը կը հասնի այդ աչքի դարնող ճոխութիւնը խափանելու համար :

Դ. Ոչ մի Եւրոպացի կրնայ առանց անգլ. կառավարութեան արտօնութեանը բնակութիւն հաստատել անոնց երկիրներուն վրայ : Այս օրէնքով այդ իշխաններն զոռչացեալ են ամեն օտար ազդեցութենէ կամ հսկողութենէ , ուստի իրենց երկիրն ոսկեզօծ բանտ մ'է :

Ե. Վերջապէս իրենց ներքին կառավարութեան չխառնուելով հանդերձ , անգլ. կառավարութիւնը քանի մը ընդհանուր օրէնքներ կամ արգելքներ ընդունել տուած է , զոր օրինակ այրիներուն կենդանւոյն կիզումը եւ աղջկանց որդեսպանութիւնը : Այսու ամենայնիւ բնիկ իշխաններն իրենց ներքին կառավարութեանց մէջ ամենաընդարձակ արտօնութիւններ ունին , իրենք կը հաստատեն իրենց երկրին ամեն օրէնքները , կրնան ի մահ դատապարտել , զօրք ժողովել , տուրք դնել , ստակ կոխել : Ասոնք ամենքն ալ կը կոչուին Արայալամ Բարոններն եւ ամեն համախմբման մէջ ունին իրենց կարգն ըստ իւրեանց կարեւորութեան :

Ըստ 1884ի պաշտօնական հրատարակութեան , հարկատու կամ դաշնակից իշխանաց բանակներն հետեւեալ թիւերը կ'ընծայեն . հնդիկ իշխանք ունէին 275,000 զօրք , 5,572 թնդանօթ . — մահմետական իշխանք , 74,000 զօրք , 865 թնդանօթ . գումար 546,000 զօրք , 4237 թնդանօթ :

Այս բանակը կը բաղկանան հետեւեալ կազմով, այրուծիէ եւ հրետաւորներէ : Հայտէրապետի Նիգամին բանակն ունի 44 հազար զօրք, լաւ կազմաւորեալ եւ քաջամարտիկ : Ոմանք ունին նաեւ թնդանօթաւորներ, հանդերձ նորագոյն կատարելագործութեամբ : Յիշենք նաեւ Ներսիս բանակն որ կը բաղկանայ 100,000 զօրքէ եւ Քաշմիրին՝ որ ունի 27000 զօրք : Թայֆանցեալ տարի նշանաւոր յողուածի մը մէջ խօսելով այդ բնիկ պետութեանց վրայ, հետեւեալ երկրիւններն յայտնած է . «Այժմ կը տեսնուի թէ այդ բանակները բնաւ հարկաւոր չեն իրենց պետութեանց պաշտպանութեան, այլ լոկ ունայնամոռութեան են արդիւնք . թէ զինուորական այդ զարդին ծախքերը կը կոխեն մեծ մասն այդ իշխանաց հասոյթին, որք կ'ուզեն վայելել այդ պերճանքն եւ այս կերպիւ հարստահարութեան եւ թշուառութեան պատճառ մը կը լինին ժողովրդեան համար . վերջապէս անգլօ - հնդիկ կայսրութեան բոլոր սահմանադիւտոց վրայ ցրուեալ այդ փոքր բանակներն կրնան ի հարկին վտանգ մը լինիլ կայսրութեան համար : Քաշմիրի Մահարաթան, օրինակի համար, իւր 27,000 զօրքով կը գրաւէ Աֆղանստանի եւ Կեդրոնական Ասիոյ միջեւ ամենէն կարեւոր դիրքն, եւ Նեբալ, 100,000 հոգւոյ բանակով մը, որ լեռնաբնակ եւ պատերազմիկ ցեղի մը կը վերաբերին, Աֆղանստանի չափ պատկառելի զօրութիւն մը կը կազմէ հարաւային սահմանադիւտոյն վրայ : Այդ Պետութեանց շատերն ունին եւրոպական ռազմագիտութիւն, զինուորագրութեան դրութիւն, զինագործարաններ : Դիմադրելու համար այդ զօրութեանց, զորս մեծ դէպքեր կրնան համախմբել եւ շարժման մէջ դնել ընդդէմ Բրիտանական իշխանութեան, եւ զսպելու համար իւր 250 միլիոն բնակչաց անհուն կայսրութիւնն, ի՞նչ են Անգլիոյ միջոցները : Բանակ մը որ հազիւ 100 հազար բնիկ զօրք ունի, եւ խելքի ու քաջասրտութեան հմայքն : Ասի բաւած է ցարդ . այլ պիտի բաւէ՞ ընդ միշտ » :

Ե.

ԴԱՍԱԿԱՐԳԵՐՆ

Կըսէինք թէ Հնդկաստան ո՛չ պետութիւն մ'է, ո՛չ ազգ մը, ո՛չ ցեղ մը, այդ բառերուն եւրոպական իմաստով : Ատի կը հաստատուի մանաւանդ այն բաժանմամբ զորս յառաջ բերած են դասակարգիչ դրութիւնն, կրօնից տարբերութիւնն, լեզուաց բազմազանութիւնն :

Յեղերու բաժանմանց ընդ, որ ազգագրական եւ միանգամայն աշխարհագրական հանդամանք մ' ունի, կայ դասակարգից բաժանումն, որ ամբողջութեամբ կաշկանդած է հնդիկ ընկերութիւնն ողջոյն : Այդ բաժանումն յառաջ եկած է գերազանց եւ յաղթական ցեղի մը հպարտութենէն որ չուզէց իւր արիւնը խառնել պարտեալ եւ հպատակ ցեղերու արեան հետ : Արդէն անշուշտ ծագումն առած են դասակարգերն Պրահմանաց եւ պատերազմիկներու, որք կ'ենթադրուի թէ կը սերին Հնդկաստանի առաջին աշխարհականներէն : Ազնուապետութիւն մ'էր այդ . եւ անոր ներքեւ ու անոր նմանողութեամբ, ընկերութեան զանազան խումբերն եւ զանազան արհեստները ժառանգական լինելով, ընդհուպ վերածուեցան դասակարգերու : Միանգամայն, ցորճափ կը ջնջուէին ցեղադրական խնամութեան հնամի յարաբերութիւններն, վաճառականաց, ռուսացաց եւ հոգեւորականաց դասերն կ'ստեղծէին նոր եւ աւելի սեղմ կապեր : Հնդկաստանի խառն ժողովուրդն կրցած է այսպէս վերածուիլ դասակարգերու : Այդ դասակարգերն անխախտ մնացին միաբանութեամբ, աւանդութեամբ եւ մանաւանդ այնու զի հնդիկ ընկերութիւնն չէր ըմբռներ եւ չըմբռներ այսօր ընկերային այլ կերպ կազմակերպութիւն մը :

Դասակարգերուն մէջ ամենէն աւելի դիտուած բանն է ամուսնութիւնն եւ ռաեստուն : Ամուսնութիւնը կը լինին ամեն դասակարգերու ամրապարտակ սահմանին մէջ եւ սրբապաշտութիւն մ'է ուստի ստորին դասակարգի մը անհատէ պատրաստուած կերակուր մը : Աստի է որ Պրահմանից դասակարգէն շատ մարդիկ խոհարարութիւն կ'ը-

ներն : Արդարեւ , ըստ որում բարձրագոյն դասակարգին կը վերաբերին , ամեն ոք կըրնայ ընդունիլ անոնց պատրաստած ուսուսան :

Բարձր կամ միջնակարգ դասերն չեն որ այսպէս կ'ստորաբաժանուին : Ամբակուռ լամբերու այդ դասակարգութիւնը կ'իջնէ ընկերային սանդուղին ստորնագոյն աստիճանն , եւ այն արհեստներն որք ամենէն քիչ ժառանգական կը թուին , ժառանգական ցեղեր եւ դասակարգեր կը կազմեն , առանց ի բաց թողլու գողերն :

Դասակարգն ընկերային կազմակերպութիւն մ'է ուսկից չկրնար խուսափիլ Հընդիկն : Որովհետեւ պէտք է գիտնալ թէ այն Հնդիկն որ իւր դասակարգին օրէնքները գրծած լինելուն համար վտարուած է յարտաքս , ա'լ ծովը նետուած մարդ մ'է . չունի ո'չ ազգայնութիւն , ո'չ ցեղ , ո'չ դասակարգ , ո'չ բնական . իւր վիճակը բոլորովին անբացատրելի է : Այդ օրինակ վտարեալի մը համար , որ չուզեր քաջուիլ «աւազակաց լեռն» , լաւագոյն միջոցն է նոր կրօնք մը կազմակերպել եւ հետեւողներ գտնել . որովհետեւ կրօնական ազանդներն ալ դասակարգերու ծնունդ կուտան : Եւ դասակարգն այնքան լաւ եղած է հնդիկ ընկերութեան բնական կազապարն , որ ամեն նոր համախմբում կը կազմակերպուի այդ վաղնջուց օրինաց համաձայն :

Զ .

ԿՐՕՆՔ

Կրօնական տեսակէտով , Հնդկաստան քառս մ'է : Արեւմտեան Ասիոյ նման միաստուածեան կրօնք մը (Քրիստոնէութիւն կամ Մահմետականութիւն) չէ ընդունած . հին բազմաստուածութիւնը կանգուն մնացած է անդ մահմետականութեան քով՝ զոր անդ մուծած են աշխարհակալք , եւ նոյն իսկ այս վերջին կրօնքն , հակառակ իւր հետեւորդաց ստուար թուոյն (աւելի մեծ քան աշխարհիս ոչ մէկ երկրին մէջ) , տկար փոքրամասնութիւն մ'է միայն Հնդկաց քով , որ կ'ապրին իրենց վաղեմի կրօնքով , ոյր սկիզբն ծանօթ չէ պատմութեան :

Կապաշտութիւնն , որում ամենուրեք կը

հանդիպինք պատմութեան մէջ , Հնդկաստանէն անհետացած չէ : Դարերու ընթացքին մէջ փոխակերպուած եւ կերպիւ իւրիք իմաստասիրութեամբ համակուած է : Այսօր կը ներկայացնէ սա տարօրինակ երեւոյթն որ բաժնուած է անհուն դասերու , որք հակընդդէմ եւ համադր , գամ քան զգամ կը բազմապատկին , այսու ծնունդ տալով կրօնական անխնայութեան մը :

Նախնի ժամանակաց երերածուի եւ անորոշ կրօնքին , զոր կը գոլացնեն Վէտայից օրհներգներն , յաջորդեց պրահմանականութիւնն , որ ունէր աւելի որոշ կազմակերպութիւն մը եւ հոգեւորականաց դաս մը , Պրահմաններն : Պուտայի բարեկարգութիւնն միլիոնաւոր կուսակիցներ խեց պըրահմանականութենէն եւ յնասեց անոր աղբեցութեան . այլ երբ պուտայականութիւնն սկսաւ քաջուիլ Հնդկաստանէն , պըրահմանականութիւնը վերստին ձեռք ձգեց իւր նախնի իշխանութիւնն : Իւր հետեւորդաց թիւն օր քան զոր կ'աւելնայ կրօնախոխութեամբն բնիկ եւ ոչ — արիական ցեղերու , որք ցարդ մեկուսացեալ ապրած էին լեռանց կամ անտառներու մէջ : Այդ ցեղերն , որք ամեն կերպիւ ստորին են Հնդիկներէն , ընկերային նոր կ'անքի մը կը բարձրանան՝ ընտելանալով գերագոյն ժողովրդեան մը ոյր կ'ընդունին լեզուն , կրօնքն եւ դասակարգից դրութիւնն : — Աստի կը տեսնուի թէ պրահմանական կրօնքն կը շարունակէ եւ կ'ուսճանայ ողբապարար , եւ Հնդկաստան ո'րչափ ալ յառաջդիմէ անդիական լուծին տակ , նա պիտի մնայ կրօնքն այդ անհուն երկրին , նոյն իսկ եթէ օր մը պարզուի եւ զտուի , յարմարելու համար բարեփոխեալ միջավայրի մը :

Մահմետականութիւնն բազմաթիւ հետեւորդներ ունի ի Հնդկաստան , — աշխարհիս խառնաց մէկ չորրորդն կամ թերեւս մէկ երրորդն : Մահմետականութիւնն իւր կարեւորութիւնը կը պարտի իւր հիմնած պետութեանց քաղաքական ազդեցութեան եւ իւր սուրին գերիշխանութեան , այլ երբ ժ. դարուն վերջերն իւր քաղաքական իշխանութիւնը տկարացաւ , իւր ծաւալումն ալ կանգ առաւ : — Հնդկաստանի մէջ կան իսլամութեան զանազան ազանդներն , «Իսնի , շիէ , լահապի » : Հնդիկներն և իսլամներն

քովէ քով կ'ապրին, եւ յաճախ մոլեռանդութիւնը կը ծնուցանէ արիւննուշտ կըռռիւներ, կրօնական մեծ տօներու ժամանակ: Անգլիական կառավարութիւնն այս սպարազային կը միջամտէ, խաղաղութիւն հաստատելու համար: — Անգլիական կառավարութիւնն յարատեւ հսկողութիւն մը կ'ընէ այդ մոլեռանդ եւ եռանդուն ժողովրդեան վրայ, որ կրնայ ծանրադոյն վճարանք մը լինիլ համիսլամեան շարժման մը մէջ:

Հազիւ կարելի է յիշատակել քրիստոնեայներն, այնքան դոյզն են այս երկու հազար կոյտերուն քով: Իրենց թիւն կը հասնի մէկուկէս միլիոնի: Քրիստոնեայ Հնդկաց մեծ մասն կաթոլիկ է եւ իրենց դարձն կը վերաբերի թէ՛ ժ.Պ. դարու վերջին ճիզուիւքառաքելութեանց, եւ թէ՛ ժ.Պ. ե.Ժ. դարու բորբոսկալեան տիրապետութեան: Քրիստոնէութիւնն յայնժամ օգուտ քաղած էր կառավարութեան մը աջակցութենէն եւ ազդեցութենէն, որ կը հետաքրքրէր ծաւալման գործին: Բողոքականք այսօր առաքելութիւններ ունին, այլ քիչ հատ յաջողութիւն գտած են միայն արեւմտեան Պէնկալիոյ, Պիրմանիոյ եւ Ասսամի լեռնաբնակ ցեղերուն քով, այսինքն ընդհանրապէս թերակիրթ եւ տակաւին կռապաշտ ժողովրդոց քով: — Բնիկ Քրիստոնեայը կը գտնուին մանաւանդ ի ծայրագոյն հարաւ: Մատրասի գաւառին մէջ կան 600,000 բրիստոնեայ եւ Թրաքիանքորի ու Գոչէնի բնիկ իշխանապետութեանց մէջ ալ աւելի:

Պարսիներն ալ մը մարդիկ են, այլ իրենց գաղթականութիւնն, համախմբեալ ի Պոմպէյ, ընկերային մեծ կարեւորութիւն մը ունի իւր անդամոց առեւտրական կացութեամբ եւ մտաւորական մշակութեամբ: Սորա կը սերին հին Պարսիկներէն, որք հաւատացող Կրակի պաշտաման եւ Զէնտ — Ավեստայի կրօնքին, է. դարուն Արաբաց աշխարհակալութենէն յետոյ թողուցին իրենց երկիրն՝ պահելու համար իրենց հին հաւատքն: Կիւղէրաբի վեհապետը թոյլ տուաւ անոնց հաստատուիլ իւր երկիրներուն մէջ, ինչ ինչ սեղմումներով, մանաւանդ՝ պայմանաւ որ չուտեն կովու եւ եզի միս, ըստ որում այդ կենդանիներ նուիրական են Հնդկաց համար: Աշխատասէր եւ հանճարեղ ցեղ

մը, խիստ յարմար վաճառականութեան եւ չափադիտութեան, Պոմպէյի մէջ առեւտրական դրամական եւ յոյժ կարեւոր տուններ ունին: «Հնդկաստանի հրեայները» կոչուած են. արդարեւ, հակառակ իրենց փոքրամասնութեան, Հնդկաստանի մէջ երկրական զօրութիւն մ'ունին որպէս Հրեայներն յեւրոպա:

Աւասիկ, 1881 ի վիճակագրին համաձայն, զանազան աղանդներն իրենց հետեւորդաց թուով. Պրահմանականութիւն՝ 187,957,000, Մահմետականութիւն՝ 50,120 հազար, Կռապաշտութիւն՝ 6,426,000, Պուտայականութիւն՝ 3,418,000, Քրիստոնէութիւն՝ 1,860,000, եւ ուրիշ բանի մը աղանդներ, սակաւաթիւ հետեւորդներով:

Անգլիացիք ապահոված են կրօնական խաղաղութիւնն ի Հնդկիս: Ամեն կրօններու վրայ հսկած են հաւասար անտարբերութեամբ եւ խղճմտաբար վճարած են կրօնական հաստատութեանց եկամուտները: Չեն նպաստաւորեր բնիկ քրիստոնեայներն եւ չեն քաջալերեր դարձերն ի քրիստոնէութիւն: Մի միայն միջամտած են արդիւնքով համար ինչ ինչ սովորութիւններ, որպէս նորածին մանուկներն երեսի վրայ թողուլն եւ այրեաց կրօնական անձնատպանութիւնն իրենց ամուսնոյն խարոյկին վրայ:

Ներոպական միտքը սկիտի կրնայ վերջապէս ներդրածել այդ աշխարհին վրայ որ ցարդ ասլոած է իւր իսկ կեանքով: — Ամեն համանման ջանք ընդունայն կը թուի այդ կազմակերպեալ ընկերութեան մէջ ուր ճշմարիտ կրօնը մը կայ, կղերով եւ վարդապետութեամբ: Խորհիլ թէ քրիստոնէական առաքելութիւնը պիտի դարձնեն զՀնդկաստան ի քրիստոնէութիւն, հաւատալ է կրանիդի վրայ արձանագրութիւն մը բանդակել եղանակով: Եւ պէտք չէ մոռնալ թէ Ասիա ընդդիմադիր ոյժ մ'ունի արտաքին դրդմանց դէմ, ոյժ վրայ յաճախ կը սկսանք:

ՔԱՂ. ԵՒ ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
(Մնացեալ յաջորդ խոսով)

ԶԱՓԱԳԻՏԱԿԱՆ

ՆՈՐ ԹՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ

ՀԵՏԵՒՈՒԹԻՒՆՔ

ԶՈՐՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆՑ

Յոյժ գեղեցիկ հետեւութիւններ կրնանք հանել չորս գործողութեանց կանոններու գործադրութենէ, սակայն նախ քան զամենայն դադար մը տանք կոտորակաց վրայ:

ԿՈՏՈՐԱԿ

Հասարակ կոտորակը ինչ որ են տասնորդական դրութեան մէջ՝ նոյն են եւս աստ: Բաւ է տասնորդական դրութեամբ գրուած կոտորակին համարիչն ու յայտարարն գրել կրկնորդականիւ:

Իսկ ասանորդական կոտորակի կը տարբերին, եւ զայս դիւրին է հասկնալ հետեւեալ օրինակներէն.

$$0,1 \quad \text{ըսել է} \quad \frac{1}{2}$$

$$0,01 \quad \text{»} \quad \frac{1}{4}$$

$$0,001 \quad \text{»} \quad \frac{1}{8}$$

$$\dots \quad \text{»} \quad \dots$$

$$\dots \quad \text{»} \quad \dots$$

Այս մի քանի բառիւ բացատրութիւնք կը բաւեն յետագայ ապացուցութեանց եւ ասանորդական կոտորակաց վերածման մասին յետագայ գլխոյ մը մէջ կը խօսինք:

ԽՆԴԻՐ ԹԻՒ 1

Ապացուցանել թէ

$$\frac{1}{4} + \frac{1}{4^2} + \frac{1}{4^3} + \frac{1}{4^4} + \dots = \frac{1}{3}$$

Չայս չորս գործողութեամբ ապացուցանելու համար կ'առնեմ $\frac{1}{3}$ կոտորակը եւ կը վերածեմ կրկնորդականի որով կ'ըլլայ

$$\frac{1}{11}$$

Բաժանման կանոնով 1ը կը բաժնեմ 11 ով եւ կ'ըլլայ

$$\begin{array}{r} 1 \ 00 \\ 11 \overline{) 11} \\ 0,010101 \dots \end{array}$$

100

11

1

Եւ թ'նչ ըսել է 0, 010101... կոտորակը որ համարժէք է $\frac{1}{3}$ թ:

Կրնանք գրել

$$0,010101\dots = 0,01 + 0,0001 + 0,000001 + \dots$$

Եւ կամ հասարակ կոտորակի ձեւով.

$$0,010101\dots = \frac{1}{100} + \frac{1}{10000} + \frac{1}{1000000} + \dots$$

Այսինքն երկու կողմն տասնորդական դրութեամբ գրելով

$$\frac{1}{3} = \frac{1}{2^2} + \frac{1}{2^4} + \frac{1}{2^6} + \dots$$

Որ կրնայ գրուիլ

$$\frac{1}{3} = \frac{1}{4} + \frac{1}{4^2} + \frac{1}{4^3} + \dots$$

Չոր հարկ էր ապացուցանել:

ԽՆԴԻՐ ԹԻՒ 2

Ապացուցանել թէ

$$\frac{3}{16} + \frac{3}{16^2} + \frac{3}{16^3} + \frac{3}{16^4} + \dots = \frac{1}{5}$$

Ինչպէս վերոյիշեալ խնդրոյն առթիւ, այս անգամ եւս կ'առնեմ $\frac{1}{5}$ կոտորակն

զոր կը վերածեմ կրկնորդականի

$$\frac{1}{5} \text{ կ'ըլլայ } \frac{1}{101}$$

բաժնելով

$$\begin{array}{r} 1000 \\ 101 \overline{) 101} \\ 0,001100110011\dots \\ 110 \\ 101 \\ 1 \end{array}$$

Այս նոր ձեւին տակ կրնամ գրել

$$0,001100110011\dots = 0,001 + 0,0001 + 0,000001 + 0,00000001 + \dots$$

զոր կրնայ հետեւեալ ձեւն զգենուլ

$$\frac{1}{101} = \frac{1}{1000} + \frac{1}{10000} + \frac{1}{10000000} + \frac{1}{100000000} + \dots$$

եւ կամ տասնորդական դրութեամբ

$$\frac{1}{5} = \frac{1}{2^3} + \frac{1}{2^4} + \frac{1}{2^7} + \frac{1}{2^8} + \frac{1}{2^{11}} + \frac{1}{2^{12}} + \dots$$

եւ կամ

$$\frac{1}{5} = \left(\frac{1}{2^3} + \frac{1}{2^4} \right) + \left(\frac{1}{2^7} + \frac{1}{2^8} \right) + \left(\frac{1}{2^{11}} + \frac{1}{2^{12}} \right) + \dots$$

Ընդ փակագծօք կոտորակներն կը գումարեմ, առաջիններուն համարին ու յայտարարն 2 ու բաղմանակելով, կ'ըլայ

$$\frac{1}{5} = \frac{3}{2^4} + \frac{3}{2^8} + \frac{3}{2^{12}} + \dots$$

այսինքն

$$\frac{1}{5} = \frac{3}{16} + \frac{3}{16^2} + \frac{3}{16^3} + \dots$$

զոր պարտ էր ապացուցանել:

Յ. ԵՈՒՍՈՒՖԵԱՆ
(Շարունակելի)

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՏԱՂ ԳԻՆԻՈՅ

ՅԱՇԸԳ ՍՕՂՊԱԹԷ ԱՍԱՅԵԱԼ

Այսաւր խմենք քաղցր եւ յորդոր,
Բարեկամաց ի հետ բոլոր,
Գինիս աղէկ ճաշակն աղւոր,
Անուշ խմենք քաղցր եւ յորդոր:

Գուք մի թողուք զիւր գուն խոռ,
Եւ կամ դատարկ պահել սափոր,
Ձի խմող մարդն է քան ծով խոր:

Այսաւր խմենք են:

Էրէջ տանուտէր հարկեւոր,
Ի հարսանիս կամ կնքաւոր,
Թող թէ կոչեն շատ կարեւոր,

Այսաւր խմենք են:

Ժողով առնեն շատ թաղաւոր,
Իւր մեծամեծք իշխանաւոր,
Լիով խմեն շատ չափաւոր,

Այսաւր խմենք են:

Խմեն լի լի մեծ փարչով նոր,
Ծուռկք անկանին զինչ մեղաւոր,
Կերպ համբուրեն տան համաւոր,

Այսաւր խմենք են:

Հաց, միս ու հաւ, տանծ ու խնձոր,
Չայնէ գուռաթ տայ հեղաւոր,
Ղրկեն միմեանց պարզեւք ոսկոր,

Այսաւր խմենք են:

Ճերմակ մորուք շատ ալեւոր,
Մանուկ ընտիր եւ ձիաւոր,
Յայնժամ խմեն սէր միաւոր,

Այսաւր խմենք են:

Նա տանուտէր մարդ փառաւոր,
Շիշան ի ձեռն է ահաւոր,
Որ ինք խմէ մարդ գլխաւոր,

Այսաւր խմենք են:

Չարէն փրկէ տէր երկնաւոր,
Պահեալ զամէն մարդ երկնաւոր,
Ձեջեա ի մէջ զմարդ նենգաւոր,

Այսաւր խմենք են:

Իամ խուժադուժ կան եւ խոժու,
Սրտանեղած նային խոտոր,
Վասն որոյ կան շատ թիւնաւոր,

Այսաւր խմենք են:

Տէր սուրբ բարի սէր հոգեւոր,
Բամեալ մարդկան սէր բանաւոր,
Յնձան սիրով յոյժ զաւրաւոր:

Այսաւր խմենք են:

Հիւժեալ մաշխմ գլուխ ի կոր,
Փառասիրեմ մարմնով զինչ հոր,
Քեզ մարտիրոս գինով խաչ կոր:

Այսաւր խմենք են:

Հաւաքեց

Հ. ԻՍԻՆԵԱՆ

ՆՈՐԱՎԷՊ

ՄԱՌԻ ՏԵ ՌԱՊԻԻԹԷՆ - ՇԱՆԴԱԼ

(Շար եւ վերջ)

Զ.

Հ Ա Ջ Ա Ր Յ Ռ Ա Ն Գ

— Պարոն տը Ռապիւդէն, ըսաւ Մառի դիմաւորելով երիտասարդ ոմն իննեւտասնամեայ որ պաշտօնակալի ճոխ համադգեստ մը հագած էր. տհա առիթը որ պիտի ցուցնէ թէ մեծ հօրեղբօրուդ ի՛նչ բանի կը ծառայես: Գիտէ՞ք որ այդ ազգականութեանդ ցարդ պէտք չեմ ունեցած:

— Խօսեցէք, չքնաղ հօրեղբօրդ ուստրս, պատասխանեց դեռատի պաշտօնակալը վայելուչ կերպով խոնարհելով Մառի ձեռաց վրայ, ուր թեթեւ համբոյր մը դրօշմեց: Խօսեցէ՛ք, բազկի՞ս, սրո՞յս պէտք ունի՞ք:

— Գրչի՞ս, պերճախօսութեամբս պէտք ունի՞ք, օրիորդ, յարեց միւս երիտասարդն, որոյ լուրջ հագուստը փաստաբան ըլլալը կը ցուցնէր:

— Նուազ քան վայդ, գեղեցիկ հօրեղբօրորդիս, պատասխանեց Մառի զուարթօրէն. ո՛չ այդչափ, պարոն Մէնաթ Հաճութեամբ կը նկատեմ թէ ա՛լ արտեղած չէք ինձ դէմ ինձ պէտք եղածն հազար Փռանդ է եւ ո՛չ այլ ինչ:

— Ոչ այլ ի՛նչ, կրկնեց տեղակալն. նեղութիւնը ձեզ անծանօթ է. եթէ Նիվէնն էի թագաւորական ամբողջ գնդին, որոյ անարժան տեղակալն եմ, ըսակը պարպէք՝ այդչափ գումար չէք կրնար դանել:

— Ոչ այլ ի՛նչ, կրկնեց նաեւ Մէնաթ, հազար Փռանդը հազուադիւրս բան մ'է երիտասարդ փաստաբանի մը քով:

— Ուրեմն կը մերժէ՞ք ըսաւ Մառի դժգոհութեամբ անոնց նայելով փոխն ի փոխ:

— Ուժն օրէնք է, ըսին միանգամայն խնամակալն, հօրեղբօրորդին, Մէնաթ:

— Արդ, ըսաւ դեռատի աղջիկն բարկութեամբ եւ արտասուելից աչօք, ես՝ Մառի տը Ռապիւդէն պարոնուհի Շանդալ

եւ Պուռալյի, միակ տէր Պուռալյիի հողին որ, ըստ ազարակապանացս, կէս միլիոն Փռանք կ'արժէ ես՝ դուստր Սէլց - Պէնիյն Ռապիւդէնի, Շանդալեան պարոնի, որ մեռած է պաշտպանելով զՌէ կղզին ընդդէմ Անգղիացւոց, եւ դուստր Մառի տը Գուլանժի եւ թոռնեայ Ժան Խուէմօյի, իւր գթասրտութեամբ աննման տիկնոջ, ես՝ ստիպուած ըլլամ, եւ այն ալ հազար անպիտան Փռանդի համար թողուլ որ թշուառութենէ մեռնի Պուռալյիի ազարակապանուհիներէս մին վշտէն խենթեանալու աստիճան բան մ'է Աստուած իմ, շուրջըս տեսնել այնպիսի անձինք որ կ'ըսեն թէ կը սիրեն զիս եւ որք սակայն կը մերժեն ինձ չնչին ծառայութիւն մը:

— Սիրելիդ իմ, ըսաւ արքայն, կը հաճի՞ք ինձ բացատրել Փսենոփոնի յունարէն սա հատուածս:

— Սիրելի խնամակալ, ես յունարէն չեմ գիտեր, ըսաւ Մառի արցունքի կաթիլ մը սրբելով:

— Բաց պիտի հաճիք թերեւս, օրիորդ, ըսաւ Մէնաթ, ըսել ինձ որ, եթէ մարդ մը մեռնի անկտակ:

— Ահա կարդացէք սա նամակն զոր առտուն ձեզ գրեցի, ըսաւ Մառի տհաճութեամբ, յետոյ կը բացատրէք թէ ո՛ւր կ'ուզէք որ սորված ըլլամ իրաւագիտութիւնն:

— Սիրելի հօրեղբօրդ ուստրս անշուշտ չ'պիտի մերժէ յայտնել ինձ իւր կարծիքն ի մասին Ռօշլի պաշարման, ըսաւ նորատին Ռապիւդէն՝ փոքրիկ Շանդալին փոքրիկ դաս մը տալու համար միւսներուն ձայնակցելով:

— Հին զօրավար մը կը կարծէք զիս, վրայ բերաւ Մառի անհամբերութեամբ:

— Աստուած իմ, ըսին միաբերան արքայն, Մէնաթ եւ Պիւսսի տը Ռապիւդէն, ըսել թէ օրիորդ Ռապիւդէն մեզ կը սիրէ եւ որ սակայն կը մերժէ մեզ չնչին ծառայութիւն մը:

— Կը տեսնեմ որ զիս կը ծաղրէք, ըսաւ Մառի, այլ ահա մէկը կուգայ, աւելցուց ըսելով կառքի մը ձայնը, եւ ծառուղին մտնող կառքն դրամատէր Պ. տը Գուլանժին ըլլալը տեսնելով. ահա մէկը որ ստակ փոխ կուտայ

— Օ՛հ, անոր գործն է այդ, ըսաւ Պիւսի տը Ռապիւղէն :

— Ուրեմն իրմէ փոխ կ'առնում, ըսաւ Մառի քայլ մ'առնելով ընդառաջ այնմ որ թէեւ դեռ չէր տեսնուեր, այլ որոյ ծանր ու դանդաղ քայլերը կը լսուէին :

Ի.

ՓՈԽԱՏՈՒԱՅ ՊԱՅՄԱՆԸ

Յետ երկուստեք բարեւներ փոխանակուելու, ի մէջ նորեկին որ վաթսնամեկ մարդ մ'էր գիրապարար եւ յաղթանդամ, եւ ձեզ ծանօթ անձանց, սիրելի փոքրիկ ընթերցողուհիքս, Մառի տը Ռապիւղէն հապճեպով խօսքն ուղղեց առ իւր մեծ մօրեղբայրն ըսելով.

— Հազար Փրանքի պէտք ունիմ, մօրեղբայր, կը հաճի՞ք փոխ տալ :

— Այդ է իմ գործս, պատասխանեց սա, կրակին մօտիկ Գուլանժ արբային դիմաց թիկնաթոռի մը մէջ տարածուելով : Մէնաժ եւ Ռապիւղէն անոնց միջեւ աթոռի վրայ նստած էին, Մառի դրամատիրոջ դիմաց յոռին :

— Վերջապէս, ըսաւ Մառի հպարտ ականարկ մը ձգելով իւր խնամակալին, մօրեղբորորդւոյն եւ Մէնաժի, վերջապէս : Եւ երկու փոքրիկ ձեռքերն երկնցուց :

— Մետաղադրամ կ'ուզէք թէ թղթադրամ, հարցուց Պ. տը Գուլանժ :

— Մետաղադրամ, մօրեղբայր իմ, պատասխանեց Մառի, ընդունելու համար ձեռքը կարկառած ըսեմ նաեւ թէ ինչո՞ւ համար է..... :

— Ինչու համար ըլլալը հասկնալու պէտք չ'ունիմ, օրիորդ քեռորդիս, ըսաւ դրամատէրն : Չըդիւ այդչափ գումար մ'ունիմ մօտըս, ընկալադիր մը կը գրէ՞ք :

— Իսկոյն, սիրելի մօրեղբայր, անյապաղ, ըսաւ Մառի, թուղթ, գրիչ եւ մեկն բերելով :

— Օրիորդն չափահաս է անշուշտ, հարցուց ներկայից Պ. տը Գուլանժ, մինչ Մառի կը գրէր : Ամուսնացած չ'է, հետեւաբար իրաւունք ունի մուրհակ մը ստորագրելու, յարեց գրականէն ոսկւով ի ըսակ մը հանելով :

— Օրիորդն անչափահաս է, պատասխանեց արբայն, այն լրջութեամբ որով դրամատէրն հարցուցեր էր :

— Այն ատեն խնդիրը կը փոխուի, ըսաւ դրամատէրն քսակը գրպանը դնելով :

— Ինչպէ՞ս, մօրեղբայր, խօսքերնիդ ե՞ս կ'առնուք, ըսաւ Մառի զարմանօք :

— Բարէ՛, սիրելի օրիորդս, պատասխանեց մեծ մօրեղբայրն, անչափահասից հետ գործ չ'էմ ըներ. անչափահաս աղջկան մը մուրհակն արժէք չ'ունի :

— Ուրեմն խօսքով փոխ տուէք, յարեց Մառի հպարտօրէն, անչափահասի մը խօսքն ընդունելի է :

— Այդ ուրիշ, յարեց Պ. տը Գուլանժ գրպանէն երկայն քսակն հանելով : Միայն, կը ներէք հարկաւ, սիրելիդ իմ. օրիորդ, յարեց դրամատէրն, ձեր ընթացից վրայ ինչ ինչ տեղեկութիւններ քաղել Երբ միայն խօսքով հազար ֆուանդ կը տրուի..... փոխառուին վրայ վստահ լինելու է :

— Մօրեղբայր, գոչեց Մառի չափազանց բարկութեամբ :

— Սիրելիդ իմ օրիորդ, յարեց դրամատէրն առանց ի գութ շարժելու, երբ մէկը, ո՛վ կ'ըլլայ թող ըլլայ, փոխառութիւն ընելու վիճակին հասեր է՝ բարկանալու չէ բնաւ՝ փոխ տալէ առաջ կատարուած ձեւակերպութեանց համար վերջապէս ներելի է ինձ ենթադրել չռայլութիւն խնայողութեան պակասութիւն ինչպէս եւ յանդուգն ձեռնարկութիւն մը եւ դրամն յանձնելէ առաջ, ներելի է ինձ, կարծեմ, քննութիւն մ'ընել ուրեմն յարմար կը դատէք, սիրելի օրիորդս, որ ձեր խնամակալ Լիվոթի արբային դիմելով

— Ինձ դիմեցէք, պարոն մօրեղբայրս, ըսաւ Մառի պաղ հպարտութեամբ, ուրիշէ մ'աւելի լաւ պիտի պատասխանեմ :

— Կանոնաւորութիւնն այդպէս չապահանջեր, բայց աւելի բնական է, եւ յանձն կ'առնում, ըսաւ դրամատէրն իւր քսակին կապերովն խաղալով : Կ'ըսէք ուրեմն, սիրելի օրիորդ, թէ հազար ֆուանդի պէտք ունիք որպէս զի

— Պուռպիլի ագարակապանուհեացս միոյն՝ մայր Մուշոյի խրճիթը կառուցանելու համար. այս գիշեր այրեր է խրճիթն, ըսաւ Մառի վերսկսելով :

— Կը հասկնամ, ըսաւ Պ. Գոռլանժ, եւ ի՞նչպէս կ'ըլլայ որ, ներեցէք անխորհրդապահ հարցմանցս, բայց երբ մէկը ստակ փոխ կուտայ, զգուշութեամբ վարուիլ կը պարտաւորի ինչպէ՞ս կ'ըլլայ որ ձեզ նման անձ մը, որ հոգեր, աղարակապանուններ ունի, ստակի նեղութիւն կը կրէ:

— Որովհետեւ ծախք ըրի, պատասխանեց Մառի:

Պ. տը Գոռլանժ յարեց.

— Իբրեւ զգուշական միջոց, պարտաւորեալ եմ ձեզ հարցնել թէ՛ ի՞նչ բանի այս հարցմանս կարեւորութիւնը կը ճանչնաք, սիրելի օրիորդս Եթէ ձեր ծախք օգտակար եւ իրաւացի եմ, յայնժամ կը լինիք այնպիսի մէկը որուն վրայ կարելի է վստահիլ եւ ձեզ փոխ կուտամ: Եթէ, ընդհակառակն իբրեւ ենթադրութիւն միայն, այն անձերէն էք որք յուսմէտս կը վստահեն մէկ օրն ամսական եկամուտին յայնժամ կը հասկնաք անշուշտ որ լերջապէս հաճեցէք ըսել, օրինակի աղաքս թէ ո՞րչափ գումար ունէիք այս ամսոյ՝ 1ին եւ ի՞նչ բանի գործածուած է:

— Կը տեսնեմ որ բռնուած եմ ըսաւ Մառի լայով եւ թէ մայր Մուշի իրաւունք ունէր երբ կ'ըսէր թէ ստակը կարծածիս չափ գիւրաւ չ'գտնուիր այս առաւել խենթութիւն մ'ըրի եւ կը տուժեմ:

— Ի՞նչ խենթութիւն, հարցուց Պ. տը Գոռլանժ:

Մառի բարկութեամբ հանեց ծոցէն ժամացոյցն:

— Ունեցած բոլոր դրամս ասոր տուի, ըսաւ:

— Այս ժամացոյցն աղւոր է Եթէ կ'ուզէք զայն վաճառել

— Դուք կը գնէ՞ք, ըսաւ Մառի փութով արցունքը պրկելով: Ո՞վ մօրեղբայրդ իմ, կ'աղաչեմ, հազար Փռանդ է արժէքը, առէք զայն եւ տուէք ինձ ստակը:

— Ի՞նչպէս, խեղճ կնկան մը տունը չինելու համար այս գոհարէն զրկուի՞լ կ'ուզէք, չընաղ քեռորդիս, ըսաւ պաշտօնական առ Մառի:

— Ո՛հ, շատ երջանիկ կ'ըլլամ, ըսաւ Մառի:

— Ամեն բան կը կարգադրուի, յարեց Պ. տը Գոռլանժ. մայր Մուշօն կը ճանչնամ, բարի կին մ'է եւ յօժարափոյթ կը նպաստեմ իրեն Արդ, սլահեցէք ժամացոյցը, իմ ծախիւքս կը կանգնեմ Պուռպիլիի խըրճիթը:

— Շնորհակալ եմ, մօրեղբայր, ըսաւ Մառի. պաղութեամբ, բայց քանի որ ես ինքնս կ'ուզեմ նպաստել մայր Մուշօին, այս մասին ոչ ումեք պիտի դիմեմ:

— Ուրեմն պահուած գանձ մը միտքդ եկաւ, ըսաւ արքայն, որ ցայն վայր անհաղորդ կը մնար խօսակցութեան:

— Ո՛հ, խնամակալդ իմ, բայց առանց ուզելու մօրեղբայրս միտքս ձգեց ընելիքս: Պ. Լըմուան կը յուսամ թէ չ'մերժեալ ետ առնուլ այս առաւօտ վաճառեալ ժամացոյցն եւ վճարել ստակս:

— Այն ատեն ժամացոյցդ պիտի դըրկուիս, ըսաւ Պ. տը Գոռլանժ:

— Բայց մայր Մուշօի տունը պիտի չինուի եւ ես, ե՛ս պիտի չինեմ զայն, ըսաւ Մառի:

— Եթէ այսպէս է, Մառի, ըսաւ դըրամատէրն, խնդրեմ նախընտրէ զիս Պ. տը Լըմուանէն. ժամացոյցն իւր բուն արժէքով կը գնեմ քեզմէ ձգիւ ժամացոյց մը պէտք էր ինձ

— Ո՛հ, յօժարափոյթ սրտիւ, մօրեղբայր, առէ՛ք:

Եւ Մառի ժամացոյցը յանձնեց ի փոխարէն հազար Փռանդի, զոր Պ. տը Գոռլանժ անոր առիգածին մէջ համրեց. յետոյ Մառի վազելով դուրս ելաւ, եւ խօլոյն ետ դարձաւ, շիկադէմ եւ պայծառերես:

— Ո՛հ, որչափ բարի էք, ըսաւ խօսքն ուղղելով առ խնամակալն, հաւատացէք որ օգտակար դաս մ'առի:

— Կը յուսամ, պատասխանեց արքայն. բաց աստի, յոյժ ուրախաւթ է որ հօրեղբայրս ժամացոյցի մը պէտք ունի եղեր:

— Այնչափ պիտանի որ, ընդմիջեց հօրեղբայրն, այսօր Մառիի տարեդարձն ըլլալով՝ մոռցեր էի հետս բան մը բերելու փոքրիկ թուռնեայս կը հաճի՞ պատուել զիս ընդունելով մեծ մօրեղբօր մը այս նուէրն:

— Այո՛, մօրեղբայր իմ, պատասխանեց Մառի, եւ այդ նուէր պիտի յիշեցնէ ինձ թէ՛ ձեր բարութիւնն եւ թէ՛ իմ խենդու-

թիւնս.... Տղայ մ'եմ ես, խնամակալս իրաւունք ունէր. Աստուած իմ, ե՞րբ արդեօք խելահաս եւ բանիմաց պիտի լինիմ:

— Այնպէս ըլլալու համար բաւ է միայն կամք ունենալ, օրիորդ, պատասխանեց Պ. Մէնաթ:

— Լռէ՛, ըսաւ Պ. տը Գուլանժ տեսնելով որ փոքրիկն իմնանուէլ ներս կուգար. եւ այս ըլլայ, Մառի, իմ խրատս որ չըլլայ թէ այս պատմութիւնն ընես անոր առջեւ որոյ մայրիկն կը կոչես ինքզինքդ. պատմութիւն՝ որ մայրիկի տիտղոսին պահանջած խելօքութեանն նպաստաւոր ապացոյց չտար:

— Պէտք է որ միշտ մարք փոքր ի շատէ անձնուէր լինին իրենց որդւոց, յարեց Մառի, եւ զի այս պատմութիւնս կրնայ զաւրկին օգտակար լինի՝ անոր փորձառութեան դաս մը տալու համար, իմ անձնասիրութիւնս կը զոհեմ:

— Կը սկսիմ հաւատալ թէ Ֆիլիբ տը լա Դուռ իրաւունք ունէր, ըսաւ արբայն իւր հօրեղբօր. այդ դատրիկն օր մը իւր վրայ խօսիլ պիտի տայ:

Արդարեւ, փոքրիկ ընթերցողուհիք, այդ դատրիկն եղաւ տիկին Սէփինէ, որոյ առաջին տիտղոսն այս է որ ամէն սերնդեան համակրելին է, առանց անմահութեան վրայ սող մ'իսկ գրած ըլլալու. բնաւ մոքէն չ'էր անցուներ թէ իւր մայրական սրտէն բխած եւ առանց յաւակնութեան դրուած նամականին օր մը ֆռանալան դրականութեան նշանաւորագոյն յիշակերտներէ մին պիտի լինէր:

ԷՕԺԷՆԻ ՖՕԱ

Թարգմ. Ս. ԴԱԻԹԵԱՆ

ԶԱՆԱԶԱՆՔ

ԴԻԻՅԱԶՆ ՄԸ

Ֆէլբօի «Փարիզեան կենաց» քրոնիկալիւրը կուգայ նոր գլուխ մը յաւելուլ անձանթ գիւցալնութեանց ոսկեղէն գրքին:

Տեսարանը կը ներկայացնէ մեղրալուսին մը: Անձինքն ե՛ն կինն եւ այրն:

Նա երիտասարդ երկրաչափ մ'է Ար-

ուեստից եւ Տարալագործութեանց, դեռ նոր ելած Կեդրոնական վարժարանէն, և նէ Կրէօզի մէկ մանրանկարը կը ներկայացնէ, նուազկոտ շնորհով: Զմեռ մը ճանչցան զիրար եւ սիրեցին: Ամեն ձեւի տակ ըսելով միմեանց թէ զիրար կը սիրէին, վերջապէս զիրար սիրեցին առանց միմեանց ըսելու, եւ խորհեցան ամուսնանալ ի մեծ խնդ իւրեանց սրտին:

Մոռները քիչ մը ուշ նշմարեցին իրենց անխոհեմութիւնն: Նա եւ նէ արդարեւ պաշտելի իմն գեղայարմար ամուլ մը կը կազմէին: Այլ մարդ չապրիր սիրով: Եւ նէ առանց օժտի էր: Եւ նա չունէր հարստութիւն: Այլ «Խրճիթ մը եւ իւր սիւրտն» առածն յար ունի իւր երկրպագուներն արուեստագիտաց մէջ: Նորա միայն դեռ բաւական միամիտ են նկատելու համար սէքն իբր դրամագլուխ: Եւ ամուլն ձեռք ձեռքի տուած սաւառնեցաւ երջանկութեան աշխարհն:

Այլ թողունք որ խօսի Ֆէլբօի քրոնիկալիւրը:

«Եւ ահա անցեալ օր, մանկամարդ կինը կառք մը կը նստի քանի մ'այցելութեանց երթալու համար: Փողոցէ մը դառնալուն, կառքը կ'ընդհարի: Երկվարը կը կքի իւր սրունքներուն վրայ եւ կը տախտապարի, տապալելով թաւալուն բանտն: Ապակիները կը խորտակին եւ կը ձեղքրտեն մանկամարդուհւոյն երեսն, եւ նէ կը նուաղի: Անցորդները կը խռնին եւ դժուարաւ հանելով թշուառուհին, կը փոխադրեն անկեան գեղարանն, արիւնալի՛, զգայազի՛րի:

«Ա՛հ, քստմնելի՛ տեսարան: Թուէր թէ այդ գեղահրապոյր դէմքին բոլոր ծակախքները բացուած լինէին, արիւն ժայթքելու համար: Եւ շրթունքէն ականջը կը բացուէր լայն վէրք մը ուսկից կը կախուէր մսի կտոր մը:

«Դեղագործն, խելայեղ, երազացնոր, մկրտան առաւ եւ կտրեց այդ կտորն: Եւ ըստ որում այդ կոկիւնի ցաւն չէր իսկ սարսըռացներ ծաղկահասակ կինն, կը պարպէ նորա գրպանները, թղթապանակը կ'առնու, թղթապանակէն այցետոմս մը, եւ կառքով իւր տունը կը զրկէ զնա: Այդ մարդ կը լուար իւր ձեռներն:

«Զեղ կը թողում դատել ամուսնոյն

խուճապն : Ժամ մը առաջ , կը թողու իւր կիներն բոլորովին առողջ , իւր գրգանայէ դեղեցկութեան բովանդակ փայլով : Եւ զայն իրեն կը դարձնեն : վիրաւոր , ժանտատեսիլ թերեւս իսկ կենազրաւ : Գլուխը պատերուն զարնելու բան չէ : Անմիջապէս կը կոչեն ընտանեաց վիրաբոյժն , ում կը պատմեն եղելութիւնը :

— Սպանդադորժի աշխատութիւն է այս , կը գոչէ : Եթէ գոհանար դարմանելով եւ եթէ ձգէր մնի կտորն , կարելի էր կարել զայն եւ քանի մը շաբաթէն վէրքը պիտի դոցուէր , առանց հետք մը թողլու : Մինչդեռ այժմ.....

— Այժմ , կը հարցունէ ամուսինն շքն-չասպառ ծայնով :

— Հարկ պիտի լինի դիմել ծայրայեղ միջոցաւ :

— Այսինքն :

— Այսինքն , անհետացեալ այտին տեղ դնելու չափ միս պիտի առնուի հէգ կնոջ մարմնոյն մէկ կողմէն , օրինակի համար թեւէն :

— Ա՛հ , ի՞նչ կ'ըսէք :

— Ի՞նչ կ'ըսեմ..... Նայեցէք ուրեմն :

« Եւ իւր արկղիկը բանալով , վիրաբոյժը պատրաստուեցաւ կատարել իւր արիւն-ուռչտ գործն :

« Այլ նա , պատրաստութեանց միջոցին , հանած էր վերարկուն , թեւերը սոթտած , եւ երկնցնելով իւր բազուկն հօլանի .

— Ես , բայց ոչ նա , ըսաւ պաղատա-դին , առէք , բայց առէք , տղթոր :

— Այլ , տարա՛բաղդ , արդէն վիրաւոր մը կայ տան մէջ :

— Կ'ուզե՛մ :

— Պատճառ այն է թէ..... ահուելի կեր-պիւ պիտի տանջուիք :

— Ի՞նչ հոգ : Ամեն ինչ հասարակաց լի-նելու է մեր մէջ , ուրախութիւնն որպէս և տառապանքն Եւ յետոյ , իմ մարմնոյս մէկ մասը չի՞ պիտի լինի :

« Այդ բառը , բոլորովին զգայական , անդիմադրելի էր , եւ բժիշկն համակերպեցաւ :

« Շայլը իսկ , եթէ ներկայ լինէր , պի-տի զգար սարսուիլն իւր պղնձեայ սրտին ' Այս կսկծեցուցիչ տեսարանին ներկայից ողջոյն աչերը թրջած էին : Նա միայն , նա

հատակն , ժպիտ մ'ունէր իւր շրթանց վրայ : « Կրկնակ , գործողութիւնն յաջողեցաւ սքանչելապէս : Եւ հազիւ նշմարելի հետք մը միայն պիտի մնայ ընդհուպ այդ չարա-շուք արկածէն :

« Ո՛վ երիտասարդ դիւցազն , կրնաս մեկնիլ ի տար աշխարհ : Թէեւ բացակայ , այլ ընդ միշտ քեզնէ բան մը պիտի մնայ ամուսնական բարձին վրայ : Բաւ է որ կինդ պառկի աջ այտին վրայ , ունենալու համար այն արեւիչ պատրանքն թէ կը ննջէ թեւիդ մէջ : Զէ՞ մի որ երջանկութիւն մ'է այս , զոր դիւրագնի դնած ես քու մտիդ մէկ կտորով :

ՀԱՍԿԱՔԱՂ

ՄԱՍԻՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Առաջադիւս խնդիրք

Թիի	6.	(Մասն. թիւ 3798)
»	7.	» » 3800)
»	8.	» » »)

ԽՆԴԻՐ

Թիի 9.

Նաւու մը մէջ երեք տեսակ ճանապարհորդք կան . կարգ մը որոց չորսը մեկ ոսկւոյ հաշուով կը ճանապարհորդեն . կարգ մ'ալ որոց իւրաքանչիւրը երկու ոսկի կը վճարէ . իսկ կան ալ որք մարդ գլուխ չորս ոսկի կը վճարեն : Մեկնած պահուն նաւագետը կը դիտէ թէ 40 ճանապարհորդք կան նաւուն մէջ եւ թէ 40 ոսկի հաողթ դոյացած է : — Արդ , իւրաքանչիւր կարգէ քանի՞ ճանապարհորդք կան :

(Ննդիրը թէեւ անորոշ է , սակայն պատասխանի թիւերն ամբողջ լինել պարտին) :

ԽՆԴԻՐ ԹԻԻ 5

ԼՈՒԾՈՒՄՆ

Բնականաբար պէտք է ամբողջ յօրինուածին ծանրութիւնը ճշդիւ հաւասարի իւր տեղափոխած ջրոյ ծանրութեան :

Արդ , գլանին ծաւալը հարկւորող ամէթ-

րով՝ կամ որ նոյնն ըսել է տեղափոխած ջրոյն ծանրութիւնն է

$$\pi 25^2$$

Արծաթեայ գլանին ծանրութիւնն է .

$$\pi (25^2 - 24, 5^2) \times 10, 49$$

Ոսկի խեցին ծանրութիւնն .

$$\pi 2, 45^2 \times 19, 26$$

Տարբերութիւն , տեղափոխեալ ջրոյն եւ խցեալ գլանին ծանրութեանց միջեւ .

$$\pi 25^2 - \pi (25^2 - 24, 5^2) \times 10, 49 -$$

$$\pi 2, 45^2 \times 19, 26$$

Տարբերութիւն որ ճշդիւ հաւասար լինիլ պարտի բլաթինէ գնտակին ջրոյ մէջ ունեցած ծանրութեան , այսինքն (+ կոչելով գնտակին անծանօթ շառաւիղը)

$$\frac{4}{5} \pi +^3 \times 21, 15 - \frac{4}{5} \pi +^3 =$$

$$\frac{4}{5} +^3 \times 20, 15 \text{ ի}$$

Որով հետեւեալ հաւասարութիւնը .

$$\pi 25^2 - (25^2 - 24, 5^2) \times 10, 49 -$$

$$\pi 2, 45^2 \times 19, 26 = \frac{4}{5} \pi +^3 \times 20, 15$$

որուն մէջ π կ'անհետանայ եւ կունենանք .

$$3 (25^2 - (25^2 - 24, 5^2) 10, 49 -$$

$$2, 45^2 \times 19, 26) = 80, 60 +^3$$

յորմէ .

$$+^3 \sqrt{3(25^2 - (25^2 - 24, 5^2) 10, 49 - 2, 45^2 \times 19, 26)}$$

$$\sqrt{80, 60}$$

$$= \sqrt[3]{9, 29} = 2, 102 \text{ հարիւրորդամէթր}$$

կամ 21, 02 հազարերրորդամէթր

Պատ. Բլաթինէ գնտակին շառաւիղը հաւասար է 21, 02 հազարերրորդամէթրի :

Լուծողաց անուններ չ'ունինք այսօր տալու դժբաղդաբար : Մեզ հասած լուծումներն ամէնքն ալ մէկ մէկ փոքր սխալ կը պարունակեն : Բլաթինէ գնտակին ծանրութիւնն մեծաւ մասամբ հաշուած է իբրեւ ջրէ դուրս . ոմանք ալ ի հաշիւ առած են գլանին պարունակած օդոյն ծանրութիւնն , իբրեւ թէ գլանը գոց լինէր : Մինչդեռ քաջ գիտեն թէ երբ չի՞ մը կշռենք , մէջի օդն ի միասին կշռած չ'ենք լինիր եւ թէ ի՞նչ պատճառաւ :

Տ. Ներսէս Յակոբբեանց ի Դավթեմ .— Թիւ 2 և 3 խնդրոց լուծումներ ուղիղ են , սակայն ժամանակին հասած չ'են :

Նոյնպէս Հ. Մ. Ը. Կեղեցի վարժարանի աշակերտներէն Պ. Ոսկան Խրքեսէլեան մեզ ուշ կը հասնէ թիւ 3 խնդրոյ լուծումն :

Պետրոս Սրապեան , Սղեբդ .— Թիւ 4 խնդրոյ լուծումը ուղիղ է :

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՖՐԱՆՍԱ

Կ. Պոլիս , 20 դեկտեմբեր

Քիչ թէ շատ հետաքրքրութեամբ օրուան քաղաքական անցից հետեւողի մը համար անկարելի է չարթուս մէջ չ'սորհիլ կամ չ'գրել Ֆրանսայի վրայ ուր վճռական որոշումներ տրուեցան :

Մասի վերջին թիւը մամուլը ներքեւ էր արդէն , երբ հեռագիրը ծանոց , դեկտեմբեր 15/25 ի երեկոյին , թէ երկար եւ բուռն վիճաբանութենէ մը յետոյ , Ֆրանսայի Ներսփոխանական Ժողովը 270 ի դէմ 274 ձայնիւ քուէարկեց է Թոնքինի համար կառավարութեան խնդրած 76 միլիոնի վարկն :

Չո՞րս ձայնից արաւելութիւն՝ որ կորոյէ սակայն աշխարհակալութեան մը շարունակութիւնն եւ նախարարութեան մը անկումը կամ տեւականութիւնն : Այս վճիռ ցոյց կուտայ միանգամայն թէ ի՞նչ մեծ փոփոխութիւնք եղած են շատ մը երեսփոխանաց կարծեաց մէջ , ի նպատ Թոնքինի խնդրոյն : Մոռցուած չէ անշուշտ , ինչպէս առիթ ունեցած ենք պատմելու այս էջերու մէջ , թէ երբ կազմուեցաւ Խորհրդարանական Յանձնաժողովը , անոր 35 անդամոց 24 ը կառավարական առաջարկին դէմ եւ Թոնքինը պարպելու կուսակից երեսփոխաններ էին : Յանձնաժողովոյ քըննութիւնք , Ֆրանսական մամուլն հրատարակութիւնք եւ մանաւանդ հանրային կարծեաց հոսանքն անկից ի վեր մղեցին զերեսփոխանս չափաւորել իրենց եռանդն , եւ Ֆրանսայի աղգային պատիւն ու ապա-

գայն միայն ի նկատի առնուել: Եւ այս կերպով ըուէարկուեցաւ ահա Պ. Պրիստնի խնդրած վարկն իւր ամբողջութեամբ:

Թոնքինի վիճաբանութիւնը Երեսփոխանական Ժողովոյ մէջ սկսաւ դեկտ. 9/21, երկուշաբթի, միջօրէին երկու ժամ յետոյ: Երբ Եւրովոյ զանազան քաղաքացի մէջ բուռն անհամբերութեամբ կ'սպասուէր այս խորհրդարանական ճակատամարտի ելից, գիւրին է ըմբռնել թէ ի՞նչ հետաքրքրութիւն կը տիրէր ի Փարիզ որ այդ ճակատամարտի թատր. կը հանդիսանար: Սովորական ժամէն շատ առաջ Պուրպուռնեան Պալատն լցուած է անհամար բազմութեամբ, արանց, կանանց, օտարականաց, գիւտնադիտաց, լրագրագետաց, որոց անբաւական կուգայ սրահն. բազմութիւնը կը վիտայ նաեւ նրբանցքներուն եւ դաւիթներուն մէջ: Երեսփոխանը ներկայ են ստուար մեծամասնութեամբ. ո՛չ ոք կը պակսի. նախարարը՝ առանց ձեւակերպութեան՝ ցիր ցան կ'երթան բազմիլ իրենց յատկացեալ սեղաններուն առջեւ. ատենաբանը իրենց տեղերն են եւ նախագահն՝ Պ. Ֆլօքէ կը հնչեցնէ բացման զանգակը:

Յանձնաժողովն - ինչպէս աշխարհի գրեթէ ամեն կողմերու Յանձնաժողովոց սովորութիւնն է - երկու տեղեկագիր բերած է. մեծամասնութեան տեղեկաբերն է Պ. Քամիլ Բէլթան՝ ցասկոտ արմատական մը որոյ տեղեկագիր լի է թշնամական ոգւով ընդդէմ նախորդ եւ արդի նախարարութեանց: Փոքրամասնութեան տեղեկագիրը՝ զոր խըմբադրած է Պ. Քաղիմիր Բէրիէ, ընդհակառակն յստակ եւ անկողմնակալ գրուած մ'է որ կը պարզէ իրաց կացութիւնն, կէտ նպատակի ունենալով երկրին արժանապատուութեան եւ անոր ճշմարիտ չահուց պաշտպանումն: Մեծամասնութիւնը կ'առարկէր թէ Թոնքին զրկուած զինուորական զօրութեանց պատճառաւ, կը տկարանային Ֆրանսայի ներքին ոյժերն. Պ. Բէրիէ հաստատեց թէ բնիկ տարրէն կազմուելիք բանակը պիտի կրնայ բաւել բարեկարգութեան պահպանման ի Թոնքին, հետեւաբար անդ պահուելիք Ֆրանսական զօրաց թիւն ի մօտոյ պիտի իջուցուի 8000 ի, որ աննշան է բաղդատմամբ չուրջն մէկ միլիոն զօ-

րաց զորս Ֆրանսա կրնայ ի գէն հանել մէկ հրաւերով: Փոքրամասնութիւնը ցոյց տուաւ նաեւ թէ միայլուն ասպագայ մը կը խոստանայ Թոնքին, իւր 12 միլիոնի չափ աշխատասէր եւ խելացի ժողովրդով, իւր անըսպառելի որդաստաններով, պէս պէս հանքերով եւ մետաքսի արտադրութեամբ, մանաւանդ երբ վաճառականութիւն եւ ճարտարարուեստը զարգանան եւ ճոխ գաղութականութիւն մը հաստատուի այդ երկրին մէջ:

Առաջին երեսփոխանն որ խօսք առաւ Թոնքինի խնդրոյն վրայ Մօնտէնէօր Ֆրէքէշէն էր, որ այս վիճաբանութեան մէջ ամենէն աւելի ուշադրութիւն գրաւող ատենաբանն եղաւ, վասն զի Անժէրի եպիսկոպոսն թէեւ իւր համոզմամբ միապետական է եւ բուռն հակառակորդ կառավարական այժմեան դրութեան, եւ սակայն այս խնդրոյն մէջ չհետեւեցաւ ոչ մէկ ներշնչման, չհամակերպեցաւ խորհրդարանական աջակողմեան կուսակցութեան ուղղութեանց, այլ ի նկատի առնելով Ֆրանսայի բարոյական եւ նիւթական գերադոյն չահերն, իւր տեսակէտով, գեղեցիկ ատենաբանութեամբ մը պաշտպանեց նախարարական առաջարկն: Չ'մոռնանք նաեւ սա պարագայ թէ Մօնս. Ֆրէքէշէ միշտ համակարծիք եղած է Ֆրանսայի գաղութային աշխարհավարութեան ընդարձակման գաղափարին, ըստ որում այդու ոյժ կ'առնու նաեւ Վաթօրիկ կղերին վարդապետութեանց ծաւալումն, եւ Թոնքինն ալ, ինչպէս կ'երեւի, գաղթականութեանց մեծագոյնը պիտի լինի:

Թէեւ Օրաթերթի մը ընդարձակ էջերը չունինք քաղաքական լրոց յատկացեալ, սակայն չենք կրնար Անժէրի Եպիսկոպոսին ատենաբանութեան գէթ վերջին մասն մեր ընթերցողաց հաղորդելու հաճոյքէն զրկուել: — « Խորհուրդ կը տրուի Ֆրանսայի, ըսաւ Մօնս. Ֆրէքէշէ, ինքն իր մէջ ամփոփուիլ. կ'ուղուի սահմանափակել զայն այն անձուկ Եւրոպային մէջ ուր Ֆրանսացի, Անգլիացի, Գերմանացի, ամենքս խնդուած ենք միմեանց վրայ: Ուրեմն չէ՞ք նշմարեր թէ մարդկութեան այս մեծ շարժումը չկրնար կեդրոնացած, սեղմուած մնալ երկրիս մէկ ան-

կրինը : Ի՞նչ պիտի լինի Հիւսիսային Ամերիկան , ի՞նչ պիտի լինի Զինատանը յիսուն տարուան մէջ : Միթէ ձեր շահը չպահանջէ՞ր այժմէն նշանակել ձեր դիրքը պատմութեան այս ճատրակտրանին մէջ եւ նըշանացիցեր կանգնել երկրագնդիս ապագայ քարտէսին վրայ :

« Առանց խաչակրութիւն հաստատել ուզելու , չէ՞ մի որ դուք՝ անդրանիկք բաղաքակրթութեան՝ պարտաւորութիւններ ունիք /կատարելու . Ֆրանսա՝ իրաւանց , արդարութեան եւ քաղաքակրթութեան այդ առաքեալը , պարտաւոր չէ՞ այս մեծ իրողութեանց ընտելացնել ժողովուրդներն , ոչ թէ ստորին սերնդէ , վասն զի չկան այդպիսիք , այլ ստորին աղանդի տէր ժողովուրդներն :

« Եւ երբ առիթը կը ներկայանայ մեզ այդ շաւղին մէջ քանի մը քայլ առնուլ տալ այդ ժողովուրդոց , մեր թեւարկութեան ներքեւ , կրնա՞նք մերժել այս պաշտօն զոր Աստուած եւ մարդիկ յանձնեցին Ֆրանսայի : Կրնա՞նք ձեռք քաշել պատմական այս մեծ շարժումներէն :

« Ձեմ գիտեր , աչքի առաջ ունենալով մարդկանց անիրաւութիւններն՝ ու կիրքերը , թէ տակաւին ի՞նչ բաներու հանդիսատես պիտի լինինք . բայց ես միշտ պիտի փառաբանեմ զանձս եւ յուսամ թէ ապագային մէջ դո՛ւ պիտի մնան ինձմէ որ այստեղ պաշտպանեցի , Ֆրանսայի դատին հետ , մարդկութեան եւ քաղաքակրթութեան դատն » :

Այս ատենաբանութիւն ընդունուեցաւ կեդրոնին եւ ձախակողմեանց բոլուն ծափահարութիւններով :

Անժէրի Եպիսկոպոսին պատասխանեց աջակողմեան երեսփոխան մը , Պ . Տըլաֆօս՝ անդամ Ֆանձնաժողովոյն եւ հակառակորդ Թոնքինեան արչաւանքին : Երիտասարդ ատենաբանը խօսեցաւ դրական փաստերով , ցոյց տալով թէ այս աշխարհակալութեան շահը միշտ նուազ պիտի լինի միասէն . եւ թէ , որքա՞ն աւելի յապաղի անանկութիւնն այնքա՞ն ահաւոր պիտի լինի այն : Այս ատենաբանութիւն բոլուն կերպիւ գրգռեց մտքերն որք արդէն տաքցած էին . մինչ աջակողմն եւ ծայրայեղ ձախակողմեանք իրենց ծափահարութիւններով ոյժ կուտային

ատենաբանին , կեդրոնն եւ ձախակողմեանք կ'ընդ միջէին զնա շարունակաբար . եւ երեսփոխանէ առ երեսփոխան դիտողութիւնք եւ ակնարկութիւնք կը բազմանային ա՛յն աստիճան որ երկու երեսփոխանք ի կարդ կոչման պատուոյն արժանացան : Պ . Տըլաֆօսի ճառին մէջէն յիշատակութեան արժանի է սա խորամիտ ակնարկութիւն որ ուղղակի Մոնս . Ֆրէքէլի սրտին կ'ուղղուէր . — « Ֆրանսան պիտի խմանայ թէ այն պահուն յորում իւր կառավարութիւնը կառաւարկէր նմա շարունակել իւր արիւնը եւ դրամը թափել Թոնքինի անդունդին մէջ , ամբողջ աջակողմն , է քաջ աւել նորա՞նէ , միաճայն բողբեց այս առաջարկի դէմ » :

Այս ակնարկութիւն յառաջ բերաւ ծափահարութիւն մը որուն միացաւ աջակողմն , է քաջ աւել այդ ձեռք , ինչպէս դիւրին է գուշակել :

Այս երկու մեծ ատենաբանութիւններէ յետոյ , մտքերն յողնած էին արդէն , երբ բեմն ելաւ Պ . Բօլ Պէր որ պաշտպանեց նախարարական առաջարկն :

Երկրորդ նիստը որ տեղի ունեցաւ յաջորդ օրը , շատ աւելի վճռական եղաւ քան զառաջինն : Դիտելի է որ մինչդեռեւ 9|21 ի նստին մէջ երկու երեսփոխանք խօսած էին ի նպաստ եւ մէկ երեսփոխան ընդդէմ Թոնքինի , դեռեւ 10|22 ի նստին մէջ խօսեցան մէկ երեսփոխան ի նպաստ եւ երկուք՝ ընդդէմ Թոնքինի . այս ընդդիմաբանից մին էր Պ . Բամիլլ Բէլթան՝ մեծամասնութեան տեղեկաբերն . թէեւ իւր ատենախօսութիւն կոչուած չէր հզօր ներդրածութիւն մ'ընել մտաց վրայ եւ չէր յառաջ բերէր նորանոր փաստեր , եւ սակայն ի լրումն չարեաց մեծամասնութեան պաշտպանողական ճառը բոլորովին աննըշմարելի անցաւ միջադէպի մը պատճառաւ որ « Պ . Պրիստնի հացին իւղ քսեց » , եթէ ներելի է այսպէս ըսել : Նոյն օրը , միջօրէին , Խորհրդարան հասած պաշտօնական հեռագիր մը կը ծանուցանէր թէ Ֆրանսացիք Մատակապարի մէջ հաշտութեան նախնական պայմանագիր մը կնքած են չովաներուն հետ : այս հեռագրոյն լուրը տարածուելով , Պ . Բէլթանէ անմիջապէս յետոյ

խօսք առաւ Մատակասքարի տրուելիք վարկի ծրագրոյն տեղեկաբեր Պ. Հիւսար եւ հարցուց Պ. տը Ֆրէսինէի թէ ստոյգ էր արտաքին գործոց նախարարը բեմն ելնենելով բերկրութեամբ հաստատեց թէ արդարեւ գոհացուցիչ վիճակի մը մէջ մտած է Մատակասքարի խնդիրն^(*) :

Նախարարական յայտարարութիւնն այնքան լաւ տպաւորութիւն ըրաւ որ չափազանցութիւն չէ ըսել թէ պահ մը մոռցուեցաւ Պ. Բէլթանի ճառն : Կարծիքները տակաւ առ տակաւ ժողովուրդին ի նպաստ նախարարութեան որ այնքան լաւ պաշտպանած էր Ֆրանսայի շահերն ի Մատակասքար եւ որ հուգար վարկ մը խնդրել Թոնքինի եւ Աննամի համար :

Երրորդ օրը (11/25 դեկտ.) խօսեցաւ Պ. Պրիսոն : Նախարարապետն ընտիր ատեն նաբանութեամբ մը բացատրեց գլխաւորաբար թէ ռաւիպարական նախարարութեան մը համար ո՛րքան հարկաւոր է գործնականապէս հերքել սա կարծիք , թէ ինք անկարող է անփոփոխ ուղղութեան մը եւ յարատեւ գործողութեան մը հետեւիլ գաղթային եւ արտաքին աշխարհավարութեանց վերաբերեալ խնդրոց մէջ :

Պ. Պրիսոնի ատենաբանութիւնն^(*) որ ճոխ եւ զգայուն հանգամանք մը կը կրէր , եւ որ բուռն ծափահարութիւններ խլեց ամեն նստարաններէ , աւելցուց նախորդ օրուան ազդեցութիւնն ի նպաստ նախարարական առաջարկին : Իրմէ վերջ խօսեցան մէկ երկու երեսփոխանք ալ , թեր եւ դէմ , եւ գլխաւորաբար պատերազմական նախարար Քամբընօն զօրավարն : Ապա վիճաբանութեան շարունակութիւնը թողուեցաւ դեկ. 12/24 ի որոյ նկարագրութիւնը պարունակող թերթերը Վառնայի թղթաբերը պիտի

բերէ մեզ այն պահուն յորում աւարտենք այս տողեր : Այլ սակայն պէտք չունինք աւելի մանրամասնութեանց . դեկտ. 24 ի հինգշաբթին եղաւ վերջին օրն եւ կրնանք ըսել վերջին երկոյն , վասն զի հաւանաբար վիճաբանութիւնը տեւած լինի մինչեւ դիշեր . եւ այսպէս Ֆրանսական Խորհրդարանն կրցաւ չորս նստի մէջ աւարտել Թոնքինի խնդրոյն նման ծանրակշիռ եւ կենսական խնդրի մը վիճաբանութիւնն : Այդ չորս նիստերու մէջ անպակաս եղան բուռն եւ տենդոտ ընդմիջումներ , յարձակումներ , ի կարգ կոչումներ , աղմուկ , ձայներու բարձրացում , ձայներու խեղդում , հեղնութիւնք եւ յուզում^(*) որք կարծես խորհրդարանական կեանքի համն ու հոտը կը կազմեն . խորհրդարանէն դուրս , առաւօտեան եւ գիշերային գումարումներ տեղի կունենային զանազան կուսակցութեանց միջեւ . նախապատրաստութիւններ կը տեսնուէին քուէարկութեան համար , բանաձեւեր կը պատրաստուէին . ի մի բան , ամբողջ Փարիզ տենդի մէջ էր :

Գուէն վերջացուց ամեն ինչ : Առաջին քուէարկութեամբ մը 267 ի դէմ 277 ձայնիւ ընդունուեցաւ պատերազմական նախարարութեան խնդրած քառասուն միլիոնի վարկն . ընդունուեցաւ նոյնպէս ծովային նախարարութեան խնդրած քառասուն միլիոնի վարկն : Ապա կատարուելով մեծ քուէարկութիւնն , նախարարական առաջարկն ընդունուեցաւ 274 քուէիւ ընդդէմ 270 ի :

Բայց այս քուէարկութիւն , երբ մէկ կողմէ կը փակէ Թոնքինի խնդիրն , միւս կողմէ նախարարական տաղնապ կը յարուցանէ : Դիւրին է գուշակել թէ Պ. Պրիսոն չորս ձայնից մեծամասնութեամբ մը չափաւ ուզէ պաշտօնի վրայ մնալ եւ իւր հրաժարում անխուսափելի կը նկատուի , թէեւ Հանրապետութեան Նախագահն չուզեր ընդունիլ զայն :

Երբ կըսենք Հանրապետութեան նախագահն , կրնանք յարել «նախորդ եւ արդի նախագահն» Պ. Կրէվիէ համար , որ վերջնորեցաւ իւր պաշտօնին մէջ եօթն տարւոյ համար : Երեսփոխանական Ժողովն եւ Ծերակոյտը միացեալ դեկտ. 18/27 ին կատարեցին այդ քուէարկութիւն յորում 592 քուէարկուաց մէջէն 458 ձայնով վերջնորեցաւ . Պ.

(*) Առտաքին գործոց նախարարին տուած բացատրութիւններէն կերեկ թէ հաշտութիւնը կը կարգուած է Հոլանտերուն (Մատակասքարի տիրող Ժողովրդեան) հետ . Մատակասքարի թագուհի արտաքին արաբերութեանց վրայ պիտի հսկէ Ֆրանսա , եւ իւր թեւարկութիւնն ի գործ պիտի դնէ ամբողջ կղզւոյն վրայ , գործակալ մը պահելով անոր մայրաքաղաքին թօնավարի վայր մէջ : Հոլանտերը 10 միլիոն Ֆրանսի գումար մ'ալ պիտի վճարեն իւր պատերազմական տուգանք , եւ մինչև ցամաքողակի վճարումն , Ֆրանսա պիտի գրաւէ գլխաւորապէս , իւր գրաւ :

Ժիւլ Կրէվի : Աջակողմը չմասնակցեցաւ քուէարկութեան : Նախագահական վերընտրութիւնն թէեւ հազուադէպ է ֆրանսական Հանրապետութեան մէջ, սակայն այս անգամ կը գուշակուէր այս արդիւնը, զի Պ. Կրէվի՝ իւր չեղոր գիրքով եւ իւր լրջութեամբ կըրցած է չահիլ Խորհրդարանի ղանադան կուսակցութեանց եւ ժողովրդեան համակրանքն որ կը կոչէ զինք եօթն տարւոյ նոր պաշտօնավարութեան մը :

Այս կարեւոր որոշումներէ յետոյ, Փարիզի Խորհրդարանը փակեց իւր արտասովոր նստալընչն եւ ֆրանսացին, թողլով քիչ մ'ալ քաղաքական գործերը քաղաքագիտաց, ինքզինքը կուտայ իւր տօներուն եւ հանգչաներուն :

Ք Ա Ղ Ո Ի Ա Մ

ՇԱՔԱԹԱԿԱՆ ԼՐԱՅ

14—20 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Սպանիոյ Խնամակալ Թագուհին, ընկերակցութեամբ իւր երկուց աղջկանց, Մէրչէտէս եւ Մարի-Թէրէզա իշխանուհեաց, երէկ երգուաւ Խորհրդարանին առջեւ, որ ի նիստ գումարեալ էր ընդ նախագահութեամբ Պ. Գանուսս աէլ Գասքիլլօի : Հանդէսը պատկառելի էր : Քրիստինէ Թագուհին ընդունեցաւ ժողովրդեան եւ ազգին ներկայացուցչաց հաւանութեան եռանդագին հաւաստիքն :

—Նայե Ծրայե Բրէւէ կը ծանուցանէ թէ անցեալ չորեքշաբթի իւր զինուորական թըղթակիցն ի Սոֆիա պուլկար իշխանութեան կողմէ ձերբակալուեցաւ, այն տեղեկութեանց պատճառաւ զորս պատերազմի դաշտէն զրկած էր իւր լրագրոյն : Երկու ժամու հարցաքննութենէ մը յետոյ, Թըղթակիցն արտաքսեցաւ պուլկարական հողէն, եւ առ այս Օրսովա զրկուեցաւ ընդ զինուորական պահակաւ : Աւստրիական գործակալն ի Սոֆիա միջնորդեց ի նպաստ Թըղթակցին. բայց պուլկար կառավարութիւնն ետ չառաւ իւր որոշում, յայտարարելով թէ, եր-

կիրը բացառիկ վիճակի մէջ գտնուելուն, այսպիսի բացառիկ տնօրինութիւնք անհրաժեշտ եղած են :

—Պէլլրատէն կը հեռագրեն առ Տէյէ Բրոնիէլ թէ Միլան Թագաւորը պաշտօն յանձնած է արդի նախարարապետ Պ. Կառաչանինի կազմել երկուց կուսակցութեանց պետերէն բաղկացեալ նոր նախարարութիւն մը :

—Գահիրէէ կը հեռագրուի առ Թայֆէ թէ Օսման Տիկմա երեւելի Մէհտիական ապստամբապետն, որ տարիներով զբաղեցուց Անգլիացիները Սուաքիմի կողմէն, ողջ առողջ է դեռ, ըստ նորագոյն լրոց, եւ հանդարտ կ'ապրի Քասալայի մէջ, զոր ապստամբը յաջողած են գրաւել : Օսման Տիկմա չէ սպաննուեր Հապէշաց Սպարապետ Ռաս-Ալուլայի յղած ճակատամարտին մէջ, յորմէ բացակայ էր : Օսման Տիկմա հիմակ ինք կը պատրաստուի եղեր քալել Հապէշաց Սպարապետին վրայ, ի Սանտիդ :

—Պիրմանաց Անգլիոյ ձեռամբ գահազուրկ Թագաւորին՝ Թիպոյի եղբայրն ապստամբութեան դրօշը պարզեց Անգլիացւոց դէմ, Յայտարարութիւն մ'ուղղելով Պիրման ժողովրդեան, որոյ անշակցութիւնը կը խնդրէ, օտարներն երկրէն վանելու համար :

—Կեդրոնական Ասիոյ վրայ հրսկող երեք բարձրագոյն հրամատարները, Կաւկասիոյ Կուսակալ Տոնտուքոֆ Քորսաքոֆ իշխանը, Թուրքաստանի Կուսակալ Ռոզէնպախ զօրավարն եւ Թաթարական տախտատանին (Սդէփ) Կուսակալ Քոլլիաքովսքի զօրավարն հրաման ստացեր են Չարէն խորհրդակցիլ այն միջոցներու վրայ զորս հարկ պիտի լինի ձեռք առնուլ անմիջապէս, երբ Անգլիոյ հետ պատերազմի խնդիր ծագի Կեդր. Ասիոյ կողմէ :

— Այն լուր թէ Պ. Կլատտոն Իռլանտական Ինքնօրինութեան դատին յարած է, ուրախութիւն պատճառեց այն փոքր ազգութեանց միայն, որք, Եւրոպիոյ այլ և այլ կողմերն, ոչ-ազգային կառավարութեանց հպատակ են, և կը բաղձան ազգային ինքնակառավարութիւն մը ձեռք բերել: Այսպէս, Իռլանտական, չեխական, բոլնական և խրուադական լրագիրք ցնծութիւն կ'արտայայտեն իսկ Գերմանիոյ, Ռուսիոյ և Աւստրիոյ կառավարական լրագիրք կը հարուածեն զՊ. Կլատտոն, ինչպէս Անգլիոյ պաշտօնողական լրագիրք և շատ մը չափաւոր-ազատական լրագիրք, իրենց գլուխ ունենալով զԹ. Կլատտոն մէջ տպագրական ազատութեան շնորհիւ հրատարակուող չեխական և բոլնական ազգասէր թերթեր իրենց ժողովուրդները կը քաջալերեն, ըսելով թէ. «Իռլանտացիք վերջապէս չահեցան ազգային դատն՝ յարատեւ ջանադրութեամբ և յուզմամբ»:— Բայց Իռլանտացիք իրօք տակաւին հեռի են «ազգային դատին» յաղթանակը տեսնելէ:

Ն Ե Ր Ք Ի Ն

— օ —

Կերեւի թէ մեծ Տէրութեանց ումանց, և գլխաւորաբար Անգլիոյ խորհրդով է որ Աղեքսանդր իշխանն որոշած է ի մօտոյ Բեդրսպուրկ ուղեւորիլ Զարին հետ հաշտուելու համար. հետեւաբար այս հաշտութիւն ո'չ թէ տեղի պիտի ունենայ յոչ կամս Անգլիոյ, այլ նոյն իսկ նորա հաւանութեամբ:

— Ըստ մասնաւոր տեղեկութեանց Մ. Զինեօրի, Աղեքսանդր իշխանը ծանուցեր է Բ. Դրան թէ չկրնար հաւանիլ որ խաղաղութեան կնքման նախնական

բանակցութիւնք փոխանակ Սօֆիայի, Պէլլրատի մէջ կատարուին: Իշխանը կը պնդէ որ այս մասին զիջողութիւն լինի Պուլկարիոյ:

Իշխանը միանգամայն ծանուցած է Բ. Դրան թէ ինք նշանակած է այն պատուիրակն որ Մաճիտ փաշայի պիտի աջակցի կատարուելիք բանակցութեանց համար:

— Էդուարդ Գալօք կը ծանուցանէ Մանչէսթրի Մանուկ Գափամաճեան և ընկ. վաճառատան և Տիգրան Մ. Գափամաճեան և ընկերութեան սնանկութիւնն: Մանուկ էֆէնտի Գափամաճեան առաջին Հայն է որ դուրծի համար հաստատուած է ի Մանչէսթր, իր ուն տարիի չափ առաջ, ունենալով առաջնակարգ դիրք մը:

— Թուրքիոյ Երեւուն Պարտուց յարգարման Յանձնաժողովը պաշտօնական ազգով մը կը ծանուցանէ թէ մինչեւ 1299 ելմտական տարւոյ վերջը դիւլուած պարտուց փոխարէն նոր արժեթուղթ տպուած են և շրջաբերութեան պիտի հանուին 1886 Յունվար 1ին:

Այս առթիւ կը ծանուցուի թէ, յիշեալ արժեթուղթք փոխանակ 3 տարւոյ, 3 տարի պիտի ընդունուին թէ՛ Մալիէին և թէ՛ ուրիշ հանրային սընտուկներու կողմէ, պայմանաւ որ առաջին (1886) տարւոյ մէջ իրենց պարտքը վճարողներէն ամբողջովին արժեթուղթ պիտի առնուի, երկրորդ տարին 100ին 10 դրամ և մնացեալն արժեթուղթ, իսկ երրորդ տարին 100ին 20ը դրամ և մնացեալն արժեթուղթ:

— Աղեքսանդրի մաքսատանց երկրորդ տնօրէն Պ. Շմիտ՝ որ Օսմ. Հանրային Պարտուց վարչութեան տնօրէն անուանուած էր Պ. Օպուանոյի տեղ, վերջնապէս հրաժարական տուած է այդ պաշտօնէն:

Ս. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Ազգ. Վարչութեան Բաղաքական և Կրօնական Ժողովներն առանձինն ուշադրութեան առնելով, «Ներսէս Վարժապետեան Ուսումնարանի Ընկերութեան» Կանոնադրին զոր յառաջագոյն ներկայացուցած էր Գործադիր Մասնախումբն ի վաւերացումն, որոշած են վաւերել նոյն Կանոնադրին հետեւեալ բարեփոխութեամբք.

Ա. Նշանակել Կանոնադրին մէջ ի կարգին որ հոգեւոյս ներսէս Պատրիարքի գերեզմանին վրայ դրուելիք տապանաքարը լինի հոգեւոյս Զաքարիա, Կարապետ, Աստուածատուր և Սարգիս Պատրիարքաց տապանաքարերուն ձեւով:

Բ. Քանի որ Ուսումնարանը կը հիմնուի եկեղեցականի մը, և մանաւանդ Պատրիարքի մ'անուամբ, Նշանակել Կանոնադրին մէջ ի կարգին որ կրօնի ուսումնի իւր ամբողջութեամբ և բարձր դիրքով առաջին տեղին ունենայ աւանդուած ուսմանց մէջ:

Գ. Կանոնադրոյն Ա. յօդուածին մէջ յիշատակել հիմնադրաց անունները:

Դ. Կանոնադրին 17 և 18 յօդուածները սրբագրել սա իմաստով որ, կըրթական ծրագիրը նախապէս Ազգային Վարչութեան վաւերացեալ, և Գործադիր Մասնախումբին համարատուութիւնը տարեկան լինի:

Ամեն. Ս. Պատրիարք Հայրն՝ Ազգային Վարչութեան սոյն որոշումներն հաղորդելով «Ներսէս-Վարժապետեան Ուսումնարանի Ընկերութեան», յանձնարարեց որ սահմանեալ բարեփոխութեանց համաձայն կարեւոր սրբագրութիւնները կատարեն որպէսզի վաւերանայ Կանոնադրը:

— Երէկ էջմիածնէն շրկուած երկու անտուկ Խորհրդատեւորներ հասան յԱզգ. Պատրիարքարան. Այս Խորհրդատեւորները թէ՛ մայրաքաղաքիս և թէ՛ գաւառներու եկեղեցեաց պիտի բաշխուին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏՈՐԱՐՈՒԹԻՒՆ

Կրօնական Ժողովոյ Ազգ. Կեդր. Վարչա-Բեան

Ազգային լրագիրք ոմանք հրատարակած են թէ ի Պալքէսէր տեղի ունեցած կըրկնամուսնութեան մը խնդիրն ի նկատ չէ առած Կրօնական Ժողովն Ազգ. Կեդր. Վարչութեան և հետեւաբար առ այն պարտ ու պատշաճ տնօրէնութիւն մը ի գործ չէ դրած:

Կրօն. Ժողովն հարկ կը համարի այսու պաշտօնական յայտարարութեամբ ծանուցանել համայն մերազնէից, թէ նոյն կրկնամուսնութեան խնդրոյն նկատմամբ օգոստոս ամսէն սկսեալ Կիպրոսի, Զմիւռնիոյ և Պալքէսէրի պաշտօնական մարմնոց հետ քանիցս ի բանակցութիւն մտնելէ յետոյ, իւր կատարած քննութիւններէն ստուգելով որ յիշեալ կրկնամուսնութիւնն արդարեւ տեղի ունեցած է ի Պալքէսէր, նոյն կրկնամուսնութեան ապօրինի և անվաւեր եղած լինելը վճռելով, և զայս վճիռ և ինչ ինչ հրահանգներ՝ որոց անկէ, ի գործադրութիւն հաղորդելով հանդերձ, նոյն ապօրինի սլոսակ ձեւացնող Տէր Մատթէոս քահանայն կոչած է յԱզգային Պատրիարքարան ի հարցաքննութիւն յատենի Ժողովոյ, որոյ յանցանքն եթէ ստուգուի, Կրօն. Ժողովն պիտի պատժէ զյանցաւորն ըստ օրինաց Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ:

12 դեկտ. 1885

Կ. Պոլիս

(ԿԵԿ)